



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

№ 53 «ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ» № 53

Հ. Ա. Խ. Հ.

ՅՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ  
ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ 1927—28 թ.  
ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈՂԹԱՆԻ ՆՅՈՒԹԵՐԻՑ

Խորագրություն՝ Հ. ՓԻՐՈՒՄՅԱՆԻ

ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ

ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1929

# ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

«ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐՍԴԱՐԱՆ»-Ի

ՀԵՑԵՎՑԱԼ ԳՐՔԵՐԸ

- |   |          |
|---|----------|
| 1. Ուղեցույց անօտառային աշխատավորի  | 50 հ.    |
| 2. Ս. Շագունց — Մեր անելիքները (սպառված)  |          |
| 3. Հ. Փիրումյան յեզ Ս. Մելքոնյան — Ինչո՞ւ ձեռնառ լին զործարանում յուղ և շվեյց. պանիր պատրաստելը (սպառ.)                       | 3 Ճ      |
| 4. Հ. Փիրումյան — Խոտարուկսերը և նրանց մշակումիան յեղանակները (սպառ.)   | 10 Ճ     |
| 5. Խ. Ավգալբեզյան — ՀԱՅՀ Հողային Որենսգիրքը, բացատրական հարց ու պատասխաններով. մասն առաջին, աշխատ. հողոգտագործություն (սպառ.) | 40 Ճ     |
| 6. Պ. Հեթիմյան. — Թթենու մշակությունը   | 10 Ճ     |
| 7. Պ. Հեթիմյան. — Եերամի վորդը, նրա կերակրելն ու խնամքը   | 10 Ճ     |
| 8. Խ. Յերփյան. — Կաթնատնտեսության գործնական ձեռնարկ, մասն առաջին (64 նկ.) (սպառված)   | 1ո. 50 Ճ |
| 9. Կ. Մելիք-Շահնազարյան. — Ծխախոտի մշակությունը (սպառված)   | 20 Ճ     |
| 10. Ս. Յերփոլին. — Տասը պատղամ անասնապահին  | 20 Ճ     |
| 11. Խ. Յերփյան. — Անհատական, թի կոռոպ. կաթնատնտեսություն  | 10 Ճ     |
| 12. Հ. Հարուրյուն. — Բատրակը, կնքիր պարմանագիր (չափածո) (սպառ.)   | 5 Ճ      |
| 13. Մ. Թումանյան. — Եարքացանը և նրա նշանակութ. 15 Ճ   |          |
| 14. Խ. Յեր-Ներսիսյան. — Ինչպես մշակել խաղողի ալգիները (28 նկարով) (սպառ.)   | 35 Ճ     |
| 15. Յերևներս գեղի գուղ. — Անդրկովկասլան Յերկրային կոմիտեյի բանաձեռք գյուղացիական հարցի մասին. Ս. Շագունցինախարանով (սպառված)  | 15 Ճ     |

338.1


Հ. Ս. Խ. Հ.

ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ  
ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ 1927—28 թ.  
ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈՂԹԱՆԻ ՆՅՈՒԹԵՐԻՑ

Խմբագրությամբ՝ Հ. ՓԻՐՈՒՄՑԱՆԻ

ՊՐԱԿ ԱՌԱՋԵ



ՀՈՂԳՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1929

Գրառեպվար № 1763թ. Պատ. № 287 Տիրաժ 3000

Պահպատի յերկրորդ տպարան Յերևանում

ՀՍԽՀ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱ-  
ԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ 1927-28 թ. ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒ-  
ԹՅՈՒՆԸ

Հայաստանի ժողովրդական տնտեսությունն  
ընդհանրապես և գյուղատնտեսությունն ու ան-  
տառային տնտեսությունը մասնավորապես՝ հա-  
րստահարված, քայլայված վիճակումն եր, յերբ  
այն ընդունեց Խորհրդային իշխանությունը:

Ցոթ տարի Խորհրդային իշխանությունը նը-  
միրված եր ՀՍԽՀ քայլայված տնտեսությունը  
վերականգնելու գործին:

1927/28 գործառնական տարին կարելի բնո-  
րոշել վորպես գյուղատնտեսության վերականգ-  
նման վերջին տարին:

Թե ցանքսերի տարածությունը և թե տա-  
վարի, վոչխարի և այլ անասունների քանակը  
հասել ե նախապատերազմյան չափերին:

Գյուղատնտեսության ապագա զարգացումը  
պետք է գնա նոր ուղիներով՝ ուժեղացնելով  
կ լիկտիվ տնտեսության ձեերը, վերակազմելով  
տնտես լինունն ավելի ուացիոնալ հիմունքներով,  
բարձրաց՝ ելով զյուղացու աշխատանքի արտա-  
դրողականությունը:

\*

\* \* \*

ՀՍԽՀ վարելահողերի ընդհանուր տարածու-  
թյունը 590.300 հեկտար ե, վորից 1927 թ.

ցանքսերը կազմում ելին 321.700 հեկտար կամ  
55,4<sup>0</sup>/₀, այսինքն՝ չնայած սակավահողության,  
չնայած ագրարային գերբնակչության, վարելա-  
հողերի կեսը համարյա մնում ե անմշտկ, ցել  
կամ խամ:

Միայն տեխնիքական բույսերի՝ բամբակի և խա-  
ղողի շրջաններում մենք տեսնում ենք, վոր վարե-  
լահողն ավելի մեծ չափով ե ոգտագործվում. այս-  
տեղ ցանքսը կազմում ե վարելահողի 70,6<sup>0</sup>/₀-ը:  
Բայց նույն բամբակի շրջանում հացահատիկը  
գեռ ցանքսերի մեջ գերազանց տեղ է դրավում:  
Դամարլվի, Բեյուք-Վեղիի շրջաններում հա-  
ցահատիկը կազմում ե ցանքսերի 62 - 67<sup>0</sup>/₀-ը:

Այս բոլորն ապացուցում ե մեր գյուղա-  
տնտեսության հետամնացությունը:

321.700 հեկտար ցանքսերից 287.400 հեկ-  
տարը 1927 թ. զբաղված եր հացահատիկներով,  
13.200 հեկտարը՝ բամբակով և միայն 3500 հեկ-  
տարը՝ ցանովի խոտաբույսերով:

Ըստ 10 տոկոսային վիճակագրական հետա-  
զսացության, հարյուր տնտեսության հասնում եր

Բնդամենը ցանքս 1.1.ծկան անասուն:

107,9 հեկտ: 149,2 գլուխ:

Յեղած տվյալների համաձայն, չափազանց  
բիչ ե և գյուղատնտեսական գլխավոր գործիք-  
ների քանակը:

Արոտային զոտում մեկ տնտեսությունը  
մեռալ ինվենտար ունի 56 ոռւբլու, գարանա-  
նացի՝ 29 ոռւբլու, աշնանացանի՝ 25 ոռւբլու և  
բամբակային՝ 57 ոռւբլու:

Պարզ է, վոր վարելահողի 55,40/<sub>0</sub>-ով մշակ-  
վելու պատճառներից գլխավորը պետք է համա-  
րել այն, վոր գլուղացիության չքավոր խավերը  
լծկանների և գութանների պակասություն են  
դպում:

1926թ. կատարված հետազոտությունը ցուց  
է տալիս, վոր վարելահողերի չմշակված մասն  
ավելանում ե կուլակային ունեող տարրերից  
սկսած գեղի միջակ և չքավոր տարրեր:

Այս հանգամանքը հողժողկոմատի առաջ  
ստիպողական պահանջ եր դնում միջոցներ ձեռ-  
նարկել՝ գլուղի արտադրական ուժերի բարձրաց-  
ման և գյուղի չքավորությանը արտադրության  
հիմնական միջոցներ հայթայթելու ուղղությամբ:

Դրա համար ել Գյուղբանկը, Հայգյուղկոպալի  
և Հողժողկոմատի հետ համաձայնեցրած ծրագրով,  
բաց ե թողել 5,528,500 ոռւբլի վարկ, վորից  
բաշխվել ե. —

Անհատական տնտեսութ.	.	3.368.500	ռ.
Խորհրդավին	»	563.800	»
Կոլեկտիվ	»	354.900	»
Գյուղ. կոոպերացիալի կենտրո-			

Նական կազմակերպ.	571.100	»	
Պետհիմնարկներին	690.500	»	
Այդ գումարներից 907.500 ու բաշխված ե արտադրական միջոցներ ձեռք բերելու նպատա- կով, վորից՝			
Գյուղմեքենաների և գործիքների համար . . . . .	202.600	ո.	
Տրակտորների և արակտորի մա- սերի համար . . . . .	158.400	»	
Հանքային պարարտանյութերի համար . . . . .	40.000	»	
Սերմացվի և սերմվարկի համար	404.500	»	
Գյուղ. ելեկտրոֆիկաց.	»	102.000	»
Լծկանների	»	300.000	»
Հայաստանի սակավահող և հողացրված պայ- մաններում, յերբ սմեն մի փոքր տնտեսություն ունի առնվազն 4—6.ից մինչև 20 - 30 կտոր հողամաս, դժվար ե սպասել, վոր արտադրական ուժերը զգալի չափով բարձրանան:			
Գյուղատնտեսության մեքենայացումը, նրա արտադրության բարգավաճումը սերտ կապված ե կոլեկտիվացման հետ։ Միայն մեծ տնտեսու- թյունները կարող են շահավետ կերպով ոգտա- գործել բարդ մեքենաները և աշխատանքը բա- ցիոնալ հիմունքներով կազմակերպել։			
Կոռլեկտիվ տնտեսության զարգացմանը,			

գյուղատնտեսական կոռակերացիային լայն աջակցություն ցուց տալ՝ լեզել ե Հողժողկոմատի յերկրորդ հիմնական նպատակը։ Կոլեկտիվ արնատեսությունների շինարարությունն ուժեղացնելու և խորացնելու նպատակով 1927/28 թ. կազմակերպվում ե կոլեկտիվ տնտեսությունների կենտրոն վորի աջակցությամբ կոլեկտիվ տնտեսության շինարարությունը գնում ե արագ թափով։ 1926—27 թվականին ութը կոլեկտիվ տնտեսությունների դիմաց—1927/28 թ. ընթացքում կազմակերպվում են 75-ը, 1533 տնտեսությունից՝ ընդգրկելով 5712 շունչ, վորոնցից աշխատանքի ընդունակ են 3.533 հոգի։ 1928/29 թվակ. սկզբում արդեն գյուղական տնտեսությունների  $0,9^0/_{\text{o}}$ -ն ընդգրկված եր կոլտնտեսությունների մեջ։

Կոլեկտիվ տնտեսությունների շինարարության ընթացքում մեծ ուշադրություն ե դարձված նրանց սոցիալական կազմի վրա։ Հստ կոլեկտիվ տնտեսությունների կենտրոնի տվյալների՝ կոլեկտիվ տնտեսություններն ունեն հետևյալ կազմը։

Զքավորներ . . . . .  $81,4^0/_{\text{o}}$

Միջակներ . . . . .  $18,2$  »

Ծառալողներ և ալյն . . . . .  $0,4$  »

Կոլեկտիվ տնտեսություններին հատկացված

հողի ընդհանուր տարածությունը անցյալ տարի  
կազմում եր 3127 հեկտար:

Սոցիալիստական սեկտորի մյուս զգալի մասը  
կազմում են խ. տնտեսությունները:

### ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սոցիալիստական սեկտորի մյուս զգալի  
մասը են խորհրդային տնտեսությունները:

Հայաստանում խ. տնտեսությունները կազ-  
մակերպվել են յերկու, միանգամայն ավերակ, կալ-  
վածատիրական տնտեսությունների ու պետա-  
կան ֆոնդի հողերի վրա: Այդ տնտեսություններում  
և հողամասերում կազմակերպված խ. տնտեսու-  
թյունները կարելի յե ասել, վոր զուրկ են յե-  
ղել արտադրական միջոցներից: Այդ միջոցների  
տեսակետից անկազմակերպ տնտեսություններ  
լինելով, բնական ե, վոր նրանք չելին կարող  
դյուղի սոցիալիստական վերակազմության դոր-  
ծում հարկ յեղած դերը խաղալ. — այն ե՝ այդ  
վերակազմության համար մատակարարել ցեղա-  
կան անասուններ, տունկեր, սերմացու և այլն:

Բացի աննշան ագրիկուլտուր ազգեցություն  
ունենալուց, նրանց դերը չնշին ե յեղել նաև դյու-  
ղատնտեսության ընդհանուր արտադրության սեջ:  
Այս հանգամանքը հարկադրել ե Հողժողկոմատին  
հատուկ մտահոգության առարկա դարձնել խ.

տնտեսությունների արտադրական միջոցների և կուլտուրական ձեռնարկների զարգացման խընդիրները։ Այս ասպարիզուտ, հաշվետու տարվա ընթացքում, Հողժողկոմատը մեծ նվաճումներ եռ ունեցել։

Միքանի թվերով ծանոթանանք այդ նվաճումներին։ Այսպես՝ Գյուղարեստի ամբողջ գույքն առ 1 ը հունվարի 1928 թ. հավասար եր 670.206 ռ., վորից շենքեր և այլ կառուցումներ 242.477 ռ., մեռյալ ինվենտար 126.476 ռ., կենդանի ինվենտար 56.612 ռ. և մնացած մշակույթներ՝ 246.339 ռ.։

Իսկ առ 1-ն դեկտեմբերի նույն թվի՝ գույքը քրն արդեն հասնում եր 855.000 ռ.։ Այս գումարի մեջ են մտնում 3 պանրագործարանների և մետաքսամանարանի արժեքները՝ 185.000 ռ.։

Այս վերջին գումարի հետ խ. տնտեսությունների գույքը հասնում է 1.000.000 ռուբլու։

Այս գումարից Գյուղարեստի սեփական կապիտալը կազմում է 605.000 ռ., իսկ արժեքի մնացած մասն աճել ե ի հաշիվ վարկային կապիտալի (մոտ 400.000 ռ.), վորի համար Գյուղարեստը վճարում է տարեկան մոտ 25.000 ռ. տոկոս։

Խ. տնտեսություններին տված բանկային վարկերը տարեց-տարի աճում են լայն չափե-

ըով. այսպես՝ 1927 թ. խ. տնտեսություններին բացված ե լեղել 365.928 ռ. վարկ, վորից յերկարատև՝ 154.206 ռ., իսկ 1928 թ.՝ 655.557 ռ., վորից յերկարատև՝ 550.119 ռ.:

Այսպիսով, տեսնում ենք, վոր բանկային վարկերը յերկու տարվա ընթացքում համարյակրկնապատկվել են: Այս վարկերի մի մասը գործադրվել ե խ. տնտեսությունների գույքն ավելացնելու վրա, իսկ մնացածը՝ ծառայել ե վորպես շրջանառության միջոց:

1928 թ. ընթացքում խ. տնտեսությունների ցանցը նույնպես փոխուսություն ե կրել. այսպես՝ Գյուղտրեստի ցանցից հանվել ե խ. Զ-րդ տնտեսությունը և հանձնվեց Պետհամալսարանին: Դրա փոխարեն Գյուղտրեստին միացվել ե Դիլիջանի անասնաբուծարանը: Բացի դրանից, կազմակերպվել են 3 նոր խորհրդային տնտեսություններ՝ Սեմյոնովկայում—Մելղանի արոտների վրա, Յանըխում—Այրիջայի մարզագետիներում ու աշնանից ձեռնարկվել ե Բասարգեչարի Զոդ գյուղում սերմնաբուծական տնտեսության կազմակերպմանը վորը պետք ե մատակարարի հացահատիկների, կարտոֆիլի և խոտաբույսերի տեսակավոր սերմացուների:

Առաջին 2 տնտեսությունները լինելու յեն կաթնատեսական-եքսպորտային տիպի: Դրանց

կից արդեն գոյությունն ունեն որինակելի պանրագործարաններ:

Այս տնտեսություններից Սեմյոնովկալինը կցվում է Դիլիջանի անասնաբուժարանին և այսպիսով կրելու յե լեռկղոնյան տնտեսության բնույթի:

Այժմ տեսնենք, թե ընդհանուր գծերով ինչ հիմնական աշխատանքներ են կատարվում խ. տնտեսությունների մեջ՝ առանձին-առանձին:

Խ. 1-ին Տնտեսուրյան. — 1. Տնկվել են խաղողինոր այգիներ 5 հեկտոր տարածության վրա:

2. Նոր այգիներից մոտ 3 հեկտար ըարձագված ե մետաղալարի վրա:

3. Հիմնական վերանորոգումն ե կատարվել գինեգործական բոլոր նկուղներում:

4. Այս գարնանը նոր այգիներ գցելու համար պլանտաժ ե կատարված 3 հեկտարի վրա:

5. Տնտեսության նկուղներում և բանվորական բնակարաններում անց ե կացրված ելեկտրական լուսավորություն:

Խ. 3-րդ Տնտեսուրյան. — 1. Կառուցված են՝ ա) բաղնիք, բ) գոմ' 100 գլուխ տավարի համար, գ) սառցարան՝ 1000 փութ տարողությամբ, դ) մեկ տուն և սենյակից՝ բանվորների համար:

2. Գոյություն ունեցող շենքերը հիմնովին վերանորոգված են:

3. Նոր այգիներ գցելու համար պլանտաժ ե արված 25 հեկտարի վրա:

4. Տնկված ե 11 հեկտար նոր այգի:

5. Գնված են կովեր՝ 16,000 ռուբլու, վորոնցից ստացված կաթը մատակարարվել ե քաղաքին՝ Հայզյուղկոոպի միջոցով:

6. Կազմակերպվել ե պտղատու ծառերի տնկարան և կազմակերպման հենց առաջին տարին աճեցված ե 40—50.000հ զանազան պտղատու ծառերի տունկեր, վորպիսիք 1929 թ. աշնանից կարելի յե բաց թողնել ազգաբնակությանը: Կազմակերպված տնկարանը հետագալում տարեկան մատակարարելու յե մոտ 200.000 հատ, զլխավորապես կոնսերվի տեսակի պտղատու տունկեր:

7. Կատարված ե հողաշինարարություն 80 հեկտար տարածության վրա:

8. Գնված ե մեկ հատ «Խնտերնացիոնալ» տրակտոր:

Այս տնտեսության մեջ հետագայում կառուցվելու յեն բանվորական բնակարաններ, վորովհետև առանց այդ բնակարանների՝ աշխատանք շարունակելն անկարելի կլինի:

Լուվա անասնաբուծարան— 1. Կառուցվել են շենքեր. ա) գոմ՝ 100 գլուխ տավարի համար, բ) խոզանոց՝ 10 մայր խոզի բաժանմունքով, գ) բանվորական բնակարաններ՝ 6 սենյակից:

2. Մեկ վերստ տարածության վրա ջրմուղ  
ե անցկացրված տնտեսության համար:

3. Գնված են կովեր **41.000** ռուբլու:

4. Կառուցված ե նոր ելեկտրոկայան **12**  
ռուժանոց:

5. Զեռք ե բերված արտասահմանից պան-  
րագործարանի մեխանիզացիայի լրիվ սարքավո-  
րում:

Դիլիջան—Սևմոնովկայի անասնաբուժարան.—

1. ավարտված ե որինակելի գոմի ներքին սուրքա-  
վորումը և նրան կից կառուցված ե յերկհարկա-  
նի մի շենք **8** սենյակից՝ կաթնատնտեսական  
լաբորատորիայի, թանգարանի, կարմիր անկրան,  
կաթի վերամշակության և այլ նպատակների  
համար:

2. Դիլիջանի տնկարանն ընդարձակված ե  
և **3** հեկտարով:

3. Գերմանիայից ստացված ե ալպյան **2**  
խոտհար մեքենա, վորոնք լեռնային մարգա-  
գետիններում տվել են հիանալի հետևանքներ:

4. Սևմոնովկայում կառուցված ե գոմ՝ **120**  
գլուխ տավարի համար:

5. Գնված են կովեր **41.000** ռուբլու:

Յանձնիք Տնտեսություն.—1. Կառուցված ե մեկ  
գոմ՝ տավարի համար և մեկ վոչխարանոց՝ **500**  
գլխի համար:

2. Զեռք են բերված 400 դլուխ ցեղական Բալբաս վոչխար։ Անասնապահության կից այս անտեսության մեջ լինելու յե ցեղական վոչխարաբուծություն, վորն ունենալու յե Միութենական նշանակություն։

Ահա ընդհանուր զծերով այս աշխատանքները, վոր կատարված են խորհրդային անտեսությունների մեջ 1928 թ. ընթացքում։

Թեթևակի համեմատությունն անցյալ տարվա ներդրումների հետ ցույց ե տալիս, վոր հաշվետու տարում դրանք մի քանի անգամ գերազանցել են անցյալ տարվանից։ Այս ներդրումներն ապահովում են, վոր գալիք տարիներում խոշոր ագրիկուլտուր արժեքներ կստացվեն իս. անտեսություններից, ինչպես, որինակցեղական անասուն, տեսակավոր սերմ, պտղատու տունկեր և այլն։

1929 թ. աշնանը խ. Յ-րդ անտեսությունը կարող ե աղգաբնակությանը տալ 50.000 պտղատու ծառատունկ, իսկ Դիլիջանը 1929 թ. զարնանից՝ 12.000 հատ։ Սա նշանակում ե, վոր խ. անտեսությունների ոժանդակությամբ կտնկվեն 320 հեկտար նոր պտղատու այգիներ։

Հաշվետու տարում խ. 1-ին անտեսությունը աղգաբնակությանը բաց ե թողել 3000 պտղատու ծառերի տունկ և 5000 արմատակալած լավ տեսակի խաղողի վազեր։

Դիլիջանի անասնաբուծարանը բաց ե թողել մոտ 30,000 թթենու տունկ և 20 գլուխ իորկշիրի ցեղական խոզ:

Լոռվա անասնաբուծարանը տվել ե եքսպորտի համար  $11\frac{1}{2}$  տոնն շվեյցարական ընտիր պանիր: Սեմյոնովկայի գործարանը պատրաստել ե 133 ցենտներ չանախ պանիր և 11 ցենտներ կարագ և այլն:

Այժմ համեմատական մի տախտակով ցույց տանք, թե ինչ գումարներ են բաց թողնված խ. տնտեսություններին 1927 և 1928 թ. թ. ընթացքում:

Այս տախտակից (տես եջ16) յերեսում ե, թե ինչ հսկայական չափերով են աճել խ. տնտեսություններին բաց թողած միջոցները:

1928. թ. ծախսերի վրա պետք ե ավելացնել նաև 3 պանրագործարանների արժեքը՝ 143.400 ռ. 05 կոպեկ:

Վերը բերած թվերը ցույց են տալիս, թե ինչ թափով են առաջ զնում մեր կոլեկտիվ ու խորհրդակին տնտեսությունները: Բայց և այսպես պարզ ե, վոր մեր ընդհանուր գյուղատնտեսության մեջ սոցիալիստական սեկտորը (կոլեկտիվ տնտեսություններն ու խորհրդակին տնտեսությունները) դեռ չափազանց թույլ ե և վոր գյուղատնտեսական արտադրությունը դեռևս

գտնվում ե անհատական անտեսությունների  
ձեռքին:

Խ. ՏՆՏԵՍՈՒ- ՔՑՈՒՆՆԵՐ	1927 թ.		1928 թ.	
	Բ.	Կ.	Բ.	Կ.
Խ. 1-ին անտեսու- թյուն . . . . .				
Թյուն . . . . .	26.034	37	52.928	60
Խ. 3-րդ անտեսու- թյուն . . . . .	53.961	36	140.192	38
Լոռվա անտանաբու- ծարան . . . . .	47.744	08	128.133	16
Դիլիջանի անտանա- բուծարան . . . . .	—	—	86.597	01
1927 թ. Դիլիջանի տրեստի ցան- ցում չի յեղել:				
Ցանքը կ կերպա- րան . . . . .	—	—	31.374	34
Խ. 2-րդ անտեսու- թյուն . . . . .	33.860	—	2.865	—
1928 թ. գերա- վարից հանձն- ված ե Պետհա- մալսարանին:				
Հնդամենը . . . . .	161.600	28	442.090	83

Պարզ ե, վոր ալդպիսի հանգամանքներում  
գյուղատնտեսության զարգացումը կախված է այդ  
անհատական անտեսությունների մասս ։ յական

զարգացումից, ուստի կոլտնտեսությունների և խ. տնտեսությունների զարգացման, նրանց ցանցի լայնացման և ուժեղացմանը մեծ ուշադրություն դարձնելով հանդերձ, անհրաժեշտ ենակ հատուկ ուշադրություն դարձնել անհատական տնտեսությունների, հատկապես միջակ և չքավը բ տնտեսությունների զարգացման վրա։ Պետք են հնարավորություն ստեղծել, վոր դրանք ամրապնդեն իրենց տնտեսությունները, իրենց ներկա անապահով և յերերուն դրությունից դուրս դան ու կախում չունենան գուղի զանազան կուլակային տարրերից։ Նրանք պետք են գուղատնտեսական հիմնական մթերքների և հում նյութերի արտադրողը դառնան։

### ~~ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ~~

~~Գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ առաջին աշխատանքը, վոր պետք է կատարվի, դա հողաշինարարությունն է։ Համայնական հողատիրությունն, իր պարբերաբար հողահավասարությամբ, յերկրում ռացիոնալ տնտեսություն վարելու անհնարին պայմաններ և ստեղծել։~~

~~ՀՄԽՀ սակավահող պայմաններում, հողերի տեսակների չափաղանց տարբերության հետևանքով, ստեղծվել են հողագրվածություն։ Հողակտոր-~~

ների քանակը մի տնտեսության մեջ հասնում է 20-ի և ավելի, իսկ ամեն մի կտորի տարածությունը հասնում է միքանի տասնյակ քառակուսի մետրի։ Միևնույն ժամանակ հողաշինարարության չյենթարկված գյուղերում ամենալավ հողամասերը գտնվում են կուլակների և ունեցողների ձեռքում։ Այս պատճառներով պարզ է, վոր տնտեսության բարդավաճումը, նրա ռացիոնալ հիմքերի վրա գնելը պահանջում է ռոաջին հերթին նոր հողաշինարարություն, վորով կվերացվեն վերոհիշյալ թերությունները։ Ներքին գյուղական հողաշինարարությունը պետք է իրեն նպատակ դնի ըստ հնարավորության նվազեցնել հողացրվածությունը, առանձին հողակտորները մեծացնել։ Այս կերպ հնարավոր կինի տնտեսությունը մեխանիզացիալի լենթարկել, չքավոր տնտեսություններին տալ ավելի լավ հողեր և մոտեցնել հողամասերը տնտեսություններին՝ ավելի հեռու ընկած հողերը տալով կուլակին և ունենոր խավերին։

Բացի այդ, հողաշինարարությունը պետք է գտներ կազմակերպվող կոլտնտեսությունների հողերը, կատարեր նրանց հողաշինարարությունը՝ համաձայն ընդունված ցանքաշրջանացման ձևի։

Մի խնդիր ևս դրված եր հողաշինարարության առաջ։

Աշխատանքների ընթացքում այնպես պիտի կատարվեր հողաբաշխումը, վոր ապագայում հնարավոր լինի առանց հիմնական փոփոխությունների ամբողջացնել չքավորության հողերը, յերբ նրանք ցանկանան կոլտնտեսության ձեւերին անցնել:

Ահա այն նպատակները, վորով ղեկավարվում եր Հողժողկոմատն այս հաշվետու տարում հողաշինարարության ասպարիզում։ Հաշվետու տարվա ընթացքում հողաշինարարության և հող ոգտագործության վերաբերյալ մշակված ու ներկայացված են ի հաստատություն և հայտարարված են հետեւյալ որենսդրությունները։

1. Կոլլեկտիվ տնտեսությունների հողերը դատելու և միացնելու մասին։

2. Համայնական արոտների ոգտագործման կարգի և պայմանների մասին։

3. Պետական ամարային արոտների ոգտագործման կարգի և պայմանների մասին։

4. Գյուղերի հողոգտագործման և շինարարության մասին։

5. Հողաշինարարության ծախսերի վճարման մասին։

Հրատարակված որենքները կարգավորում են կոլլեկտիվ տնտեսությունների հողաշինարարությունը։ Դրանք կարգավորում են նաև

գյուղական և պետական արոտների ողտագործումը, վորով ապահովում ե լերկրի անասնապահության այդ դլամավոր ֆոնդը։ Գյուղերի հատակագծման և շինարարության որենքները՝ կարգավորելով այդ հարցը, պարզելով տեղ կան մարմինների իրավունքները և պարտականությունները, կաջակցեն գյուղի ռացիոնալ շինարարության։ Ընթացիկ աշխատանքներում հողաշինարարական վարչությունը ղեկավարել ե տարվա սկզբում կազմած և Հողժողկոմատի կողեզրայի կողմից հաստատված ծրագրով։ Այդ ծրագիրը, վորը համաձայնեցված ե պրոֆմիության հետ, կոնկրետացնում ե ամեն մի տեխնիկի աշխատանքի տեսակը և քանակը՝ ապագայում տարածայնություններից խուսափելու և ծրագիրը լրիվ կատարելու համար։

Բացի տարեկան ռաֆերացիոն ծրագրից, հաշվետու տարում մշակված ե լոթնամյա ծրագիր՝ հողաշինարարությունը վերջացնելու և հնգամյա ծրագիր՝ հողաշինարարության, գաղթի և բնակեցման համար։ Կատարված աշխատանքներից անհրաժեշտ ե հիշել։

- Տիանգուլիացիոն աշխատանքներ նախատեսված եր կատարել 111 կետում, իսկ կատարված ե 213 կետում Ամեն մի կետը սիջին հաշվով 56 ռուբլի ծախս պահանջեց՝ 100 ռուբլու դի-

մաց, վորպիսի գումար պահանջվում եր անցյալում:

2. Հողաշինարարական աշխատանքները — Այս աշխատանքները կենտրոնացված ելին Եջմիածնի և Յերևանի գավառների թանգարժեք կուլտուրաների շրջաններում և Լենինականի գավառում, վորտեղ բավական մեծ թվով գաղթականության հող ե տրված:

Փամբակ-Լոռու, Նոր-Բայազեղի և Դարբագյաղի գավառներում հողաշինարարական աշխատանքները տարվել են լեռնային մասում, ազգային փոքրամասնությամբ բնակեցված վայրերում:

Հողաշինարարություն կատարված եւ:

1927 թ. 1928 թ.

Անկյունաչափական արտանկար . . . . .	15,900	հեկտ.	18,000	հեկտ.
Մենդուլայով արտանկար . . . . .	53,656	«	79,000	«
Միջյուղյա հողաշինարարություն . . . . .	24,978	«	54,000	«
Արոտների բաշխում . . . . .	81,376	«	60,000	«
Գյուղերի հատակագծում . . . . .	3,667	«	9,000	«

Նույն տարվա ընթացքում առանձին տեղ ե բռնել խորհրդային և կոլլեկտիվ տնտեսությունների հողաշինարարություններ:

Խորհրդային տնտեսություններին նոր հողամասեր ե բաշխված 3500 հեկտար և 5,000 հեկտարի վրա ել հողաշինարարություն ե կատարված:

Կոլլեկտիվ տնտեսությունների գծով հողա-

բաշխում ե կատարված 6248 հեկտար՝ 85 կոլ-  
յեկտիվ տնտեսություններում։ 27 կոլեկտիվ  
տնտեսությունների մեջ կատարված ե հիմնական  
հողաշխնաբարություն՝ տեխնիկաների միջոցով,  
մնացյալին հող հատկացված ե հրահանգիչների  
և գյուղատնտեսների միջոցով։

Յ. Ամառային արտեների ոգտագործման կարգավոր-  
ումը։ — 1927 թ. արոտների 52 տոկ. ը գտնվում եր  
տեղական հասարակությունների ոգտագործման  
տակ — ընդամենը 225.185 հեկտար, և 48 տոկ.՝ ը՝  
208.852 հեկտարը՝ հարևան հանրապետություններից  
յեկած քոչվորների արամադրության տակ։ Իսկ  
1928 թ. տեղական ընակչությունը ոգտագոր-  
ծում եր 265.197 հեկտար — 58 տոկ. ը և քոչվորները  
195.974 հեկտար — 42 տոկ.՝ ը։ Այդպիսով՝ համեմա-  
տաբար բարելավված են լեռնային անասնա-  
պահական շրջանների արոտային տնտեսության  
պայմանները։ Բայց պետք ե ասել, վոր Զան-  
գեզուրի գավառը, ուր քոչվորների ձեռքին են  
գտնվում արոտների 75 տոկ.՝ ը. տեղական ընակ-  
չությունը մեծ դժվարության մեջ ե գտնվում  
այդ տեսակետից։ Զանգեզուրի արոտների  
բաշխման ծրագիր ե կազմված, վորն ապահովում  
է ինչպես կաթնատնտեսական արտելների,  
նույնպես և անասնապահ գյուղ. համայնքների  
կարիքները։ Քոչվորներին արամադրվող մասը  
կրճատվում ե մինչև 25 տոկ.։

Ալդ ծրագիրը կիրագործվի 1929 թ. դար-  
նանից:

4. Գաղք յեզ բնակեցում.— Ալդ նսլատակի հարար նախատեսված եր հաշվետու տարում ծա-  
խսել 470,000 ռ. 1926/27 թ. 380,000 ռ. դիմաց:

Ժողկոմխորհի հաստատությամբ Գյուղ-  
բանկի միջոցով ալդ գումարները բաշխված են  
հետևյալ կարգով—

Ո՞ւ մ ե տ ր վ ա ծ	
1. Կումունաներին . . . . .	20.000 ռ.
2. Լենինականի գավառին . . . . .	53.000 »
3. Ն-Բայազեղի գավառին . . . . .	68.000 »
4. Եղմիածնի գավառին . . . . .	90.000 »
5. Փամբակ-Լոռու գավառին . . . . .	69.000 »
6. Զանգեզուրի գավառին . . . . .	67.000 »
7. Յեղեանի գավառին . . . . .	50.000 »
8. Դիլիջանի գավառին . . . . .	14.000 »
9. Դարալապլազի գավառին . . . . .	5.000 »
10. Անվերադարձ ծախսեր և ապարատի ծախս <sup>1)</sup> . . . . .	34.000 »
<b>Ընդամենը . . . . .</b>	<b>470.000 ռ.</b>

Գյուղական շինարարության մեջ Հողժող-

1. Անվերադարձ ծախսեր հաշվում են դադա-  
կանների տեղափոխման և ապարատի վրա տրված  
ծախսերը.

կոմատն ունեցել ե իր ղեկավար մասնակցությունը։ Մի քանի շրջաններում այդ շինարարությունը կատարել ե Հողժողկոմատն ինքը, բնակողների մասնակցությամբ։ Այդ գծով հիմնված ե 8 գյուղ։ Մինչև հաշվետու շրջանի վերջը կառուցված յե 350 շենք։ Մի շենքի միջին արժեքը 300 ռուբլի յե, չհաշված բնակչության ծախսը, վորը տրամադրել ե շինարարական նյութերի տեղափոխության միջոցներն ու մասամբ նաև շինանյութը։ Շինվարկի մյուս մասն անմիջապես ոգտագործել են գաղթականները ու հիմնել են 2 գյուղ։ Գաղթի գծով հաշվետու տարում վարկավորվել ե մոտ յերկու հազար տնտեսություն։ Նրանց տրամադրված վարելահողը հասնում ե 7000 հեկտարի։ Հաշվետու տարում այս ասպարիզում աշխատող հողաշինարարական կազմը նախորդ տարվա համեմատությամբ ուժեղացված ե։

1926/27 թ. աշխատում եր 37 հոգի։

1927/28 թ.      »      » 49      »

Հողաշինարարության ծախսերը կազմում եյին 218.214 ռուբլի։

### ԱԴՐԻԿՈԽԱՏՈՒԹ ԱՇԽԱՏԵՑՆԵՐ

Հայաստանի գյուղատնտեսությունն, ինչպես ասացինք, շատ հետամնաց եւ Տնտեսության այն ձևերը, վոր գոյություն ունեն մեզ մոտ, չեն

համապատասխանում ներկայի տնտեսական պայմաններին։ Դրանք չեն համապատասխանում նաև բնագագատմական պայմաններին։ Մեր ցանքերի գերազանց մասը, ինչպես յերեսում եվերը մեր բերած տվյալներից, կազմում են հացահատիկները (ցորեն, գարի), այն ել գլխավորապես զարնանացան։

Պարզ ե, վոր անընդհատ, տարեց-տարի ցաննվող հացահատիկներն ուժասպառ են անում հողերը և պակասեցնում բերքը։

Մյուս կողմից՝ մենք ունենք լեռնալին շրջաններ, ուր հացահատիկների ցանքը բոլորովին ապահոված չե և շարունակ տուժում ե՝ կամ կարկափ, կամ ցրտահարությունից։ Այդ շրջաններն անհամեմատ հարմար են կաթնատու անասնապահության համար. դաշտավարությունն այստեղ պետք ե ծառայի անասնապահության կարիքներին, այսինքն՝ պետք ե ցանվեն խոտարույսեր, արմատապուղներ։ Հացահատիկները վորոշ չափով պետք ե տեղ բռնեն ցանք։ շրջանացման մեջ, բայց պետք ե այնպիսի տեսակներ ընտրվն, վոր ավելի համապատասխանեն տեղի պայմաններին։

Այդ հարցերով, նաև հողի ավելի կտտարելագործված ձևերով մշակելու և պարարտացման խնդիրներով զբաղվելու անհրաժեշտ ե՝ մեր

գյուղատնտեսության ապագա զարգացման, նրա  
բարգավաճման համար Այս ուղղությամբ մեզնից  
պահանջվում ե փորձառություն, դիտական հե-  
տազոտություն՝ նախքան այս կամ այն բույսը  
մասսայականացնելը, նախ քան այս կամ այն  
տնտեսություններին մշակության վորևե ձե  
առաջարկելը:

Հայտնի յե, վոր Հյուսիսային Ամերիկայի  
Միացյալ Նահանգների գյուղատնտեսության ա-  
րագ թափով զարգանալը գլխավորապես փորձ-  
նական գործի զարգացման հետևանք ե: Ամե-  
րիկան փորձնական գործի համար կանգ չի առ-  
նում տասնյակ միլիոների ծախսի առաջ: Փորձ-  
նական գործը Հայաստանում սկսված ե լերկրի  
խորհրդայնացման որից: մինչ այդ վոչ մի փորձ-  
նական հիմնարկություն չկար այստեղ:

Տարեց-տարի Հողժողկոմատը լայնացնում ե  
հետազոտման աշխատանքները:

Ուսումնասիրվում ե թե՛ հողը, թե՛ հողի մշակ-  
ման գանազան ձևերը, թե բույսերի նոր տե-  
սակները: Տեսակավոր սերմացու ստանալու ուղ-  
ղությաբ մհծ աշխատանք ե կատարվում մանրակր-  
կիտ աշխատանք ե տարվում տեսակավոր սերմնա-  
փորձահողամասերում, — Լենինականի և Եջմիածնի  
փորձադաշտերում ու սելեկցիոն կայանում և այլն:

Հաշվետու տարում Հողժողկոմատը հիմնել

ե այգեղործական-գինեղործական կայան, վորով և մեր գլուղատնտեսության մեջ մեծ դեր խաղացող այդ ճյուղը նույնպես ապահովվում ե գիտական աշխատանքով։ Նույն տարում հիմք ե դրվել բոտանիքական ազգումն, վորի նպատակն ե ուսունասիրել թե մեր յերկրի վայրի բուսականությունը՝ նրանց մեջ պիտանիները հայտնաբերելու ու նրանց ոպտագործելու համար և թե այլ յերկրների զանազան պիտանի և տեխնիքական բույսերը մեզ մոտ մշակելու հնարավորթյունները։

Այսպիսով, 1927.28 թ. Հողժողկոմատին կից աշխատում են արդեն հետևյալ գիտական-փորձնական հիմնարկությունները։ —

1. Եջմիածնի սելեկցիոն կալանը։

2. Եջմիածնի փորձադաշտը,

3. Լենինականի փորձադաշտը։

4. Տեսակավոր սերմնափոծնական բամբակի հողամասեր Եջմիածնում և Աղհամզալվում։ Ցորենի և այլն բույսերի՝ Եջմիածնում և Լենինականում։

5. Այգեղործական կայան – Յեկանում։

6. Յերևանի շերամապահական կայան։

7. Բոտանիքական այգին։

8. Գյուղատնտեսական թանգարան։

9. Կողբի Փիլոքսերալին կայան։

10. Սևանի լճակայան։

11. Ողերեկութաբանական ցանց։

12 Հանքային պարարտանյութերի փորձ-  
նական ցանց:

Յերկար կլիներ ալստեղ մեկ առ մեկ հիշել  
այն բոլոր փորձերը, վոր ընթացիկ տարում  
դրված են այդ հիմնարկություններում և վորոնք  
գյուղատնտեսության զարգացմանը պիտի մեծա-  
պես նպաստեն: Փորձադաշտերը վորոշում են  
թե մշակման վոր ձևերն են ուղիղնալ, ուսու-  
մնասիրում են վարի խորության նշանակությունը,  
ցանելու ժամանակի նշանակությունը, վոռոգման  
չափը, ժամանակը, բույսերի հաջորդականու-  
թյունը և այլն:

Մեր պայմաններում բույսերի լավագույն  
տեսակը վորոշելու համար կատարված են փորձ-  
նական ցանքսեր, վորոնցինց՝

### Եջմիածնի փորձադաշտում՝

Աշնան ցորեն	26	ա՛նսկ
Աշնան գարի	6	»
Դարնան ցորեն	16	»
Դարնան գարի	23	»
Յեզիպացորեն	11	»
Սորգո	10	»
Լորի	31	»
 Լենինականի փորձադաշտում՝		
Աշնան ցորեն	47	»
Գարնան ցորեն	19	»
Գարնան գարի	18	»
Վարսակ	13	»

Շաքարի ճակնդեղ	23	տեսակ
Յեզիրացուեն	16	»
Կարտոֆիլ	10	»
Սորգո	3	»
Լոբի	13	»

Եջմիածնի փորձնական հողամասում փորձվել են 23 տեսակ բամբակի սերմեր, Աղհամդալույի հողամասում՝ 20 տեսակ:

Բացի այդ, զանազան շրջաններում՝ սկսած բամբակի շրջանից մինչև Յելենովկա-Յեղվարդ՝ թե փորձադաշտերում և թե առանձին հողամասերում զանազան պարար տանյութերի փորձեր են կատարված: Ընդամենը փորձեր են արված բամբակի վրա՝ 33 կետում, զարնան ցորենի՝ 18, ծխախոտի՝ 3, ճակնդեղի՝ 9. կարտոֆիլի՝ 3, խոռարարանութ գործ են ածված ցիանամիդ և այլ նյութեր: Թեպետ և փորձնական գործը մի տարվա գործ չե, այլ բազմաթիվ տարիների, այնուամենայնիվ արդեն վորոշ հաղթանակներ ձեռք են բերված այս տապարիզում: Այսոք կարող ենք ասել, վոր Լենինականի փորձադաշտը Լենինականի շրջանի համար լուծեց շաքարի ճակնդեղի խնդիրը, ցուց տվեց, վոր Շիրջրանցքով վոռոգվող տարածության և առհասարակ Շիրակի տափարակի համար աշնանացան ցորենի մշակությունը ձեռնտուիե, հայտնա-

բերեց, վոր գարու մի տեսակը, վոր մշակվում  
ե գարեջրի համար, Աենինականում տալիս և  
շատ լավ վորակով հատիկ:

Համաձայն պրոֆ. Տալանովի հայտարարու-  
թյան, այդ տեսակը, յեթե այստեղ լայն չափե-  
րով մշակվի, վոչ միայն Միության գարեջրի  
գործարաները կգննեն այն, այլ և մեծ քանակու-  
թյամբ կարասահանվի արտասահման:

Զի մոռացված, իհարկե, զանազան վնասատու-  
ների դեմ աշխատանքներ տանելը։ Մի կողմից  
տարվում են հետազոտական աշխատանքներ, հայտ-  
նաբերվում են բույսերի վնասատուներ և  
հիվանդություններ, նրանց զարգացման պահ-  
մանները, պայքարի միջոցները, մյուս կողմից՝  
դեկավարվում ե նրանց դեմ տարվող պայքարը։  
Մանավանդ մեծ ուշադրություն ե դարձված  
բամբակի վնասատուների վրա։ Այս ասպարի-  
զում ահա յերկրորդ տարին ե, վոր դրամական  
միջոցներով ոգնության ե դալիս Բամբակկոմը։

Հաշվետու տարում յերկու յենթակայան ե  
բացված Դուրդուղութիում և Վաղարշապատում՝  
կահավորված լաբորատորիաներով, վորոնք կրո-  
վում են թե չոռ հիվանդությունն առաջաց-  
նող միջատի և թե այլ վնասատուների դեմ։

Հաշվետու տարում մեկ տոկոսային հետա-  
զոտություն կատարվեց, վորոշելու, թե ինչ

չափով ե զարգացած բամբակի նոր հայտնաբերած «վիրտ» հիվանդությունը:

Խոչպես հայտնի լե, Թուրքիայում տարածված են բամբակի զանազան հիվանդություններ, վորոնք կարող են տարածվել նաև մեզնում՝ այստեղից ներմուծվող բամբակի միջոցով։ Դրա առաջն առնելու համար Մարգարայում դործել ե մի առանձին կայան, վոր հետազոտել ե ներմուծվող բամբակները։ Բամբակի շրջաններում ամառվա ընթացքում լայն աշխատանք ե տարգած չոռի դեմ. այդ աշխատանքը ղեկավարելու համար աշխատում եյին 18 հրահանգիչներ։ Լեռնային շրջաններում նախորոք կատարված հետազոտությունը ցույց տվեց, վոր մոտ 129.274 հեկտար տարածություն վարակված ե մկներով։ Հողժողկոմատի կողմից դարնանը պայքար կազմակերպվեց 77, 123 հեկտար ցանքսերի վրա։ Պայքարը հաջող լելք ունեցավ և մկները զգալի վնաս չտվեցին ցանքսերին։

Այդեգործական կայսերը, վորն ունի վնասատուների դեմ պայքարելու առանձին բաժին, իր ժամանակին հրահանգեց պայքար սկսել և ցուցադրական պայքար մղեց հրահանգչական կազմի միջոցով։ Կայսերը այս տարի շարունակեց իր հետազոտությունը խաղողի վազի ամենավտանգավոր վնասատութի՝ Փիլլոքսերայի դեմ,

վորը 1926/27թ. հետազոտության ընթացքում հայտնաբերվել եր Դիլիջանի և Լոռի-Փամբակի գավառոներում։ Հաշվետու տարրում հետազոտվեցին Դամարլվի և Աշտարակի այգիները։ Փիլոքսերա չհայտնաբերվեց։

Կտրուկ միջոցներ են ձեռք առնված, վոր Փիլոքսերան մուտք չզործի մեր դիմավոր այ. գեղործական շրջանները։ Արգելված են ներմուծել կենդանի բույսեր, առանց այդեղործական կայանի թույլտվության։ Դարաքիլիսայում հիմնված ե տխտանանման կամերա, վորով պետք ե անցնեն ներմուծվող բույսերը։

Զնայած դեռ Փիլոքսերա չկա, այնուամենայնիվ կայանը հիմնել ե ամերիկյան վազի տնկարաններ, ուսումնասիրվում են զանազան պատվաստներ, վոր հնարավոր լինի տեղական վազը փոխարինել ամերիկյան վազով, յեթե Փիլոքսերան տարածվի նաև մեղնում։ Այդ նախապատրաստական աշխատանքի բացակայությունը վերաստանում իր ժամանակին պատճառ յեղավ այնտեղի ալգեգործության քակքայման և այգիների տարեց տարի պակասելուն։

Այդեգործական կայանը ստացել ե Ֆրանսիայից 26.000 մետր ամըրիկյան վազեր՝ անկարաններ կազմակերպելու համար։

Վորապեսզի վազերի հետ ֆիլոքսերուն մեր յերկիրը չներմուծվի, այդ վազերը մի տարով տընկված են Աղբբեջանի ախտահանման տնկարանում Սարալի կղզում. այս գարուն միայն նրանք կտեղափոխվեն մեզ մոտ:

Տեղական տեսակի խաղողներ են պատվաստված ամերիկյան վազերի վրայ:

Պարզվում ե տեղական տեսակների բերքատվությունը: Խորհրդալին 1-ին տնտեսության այգիներում և անհատական այգեգործական անտեսությունների մեջ վազերի լավագույն տեսակները նշված են՝ նրանցից մատեր վերցնելու և կենդանի կողեկցիա կազմելու համար: Հողի նմուշներ են վերցված և ձմրան լնթացքում քիմիական քննություն ե կատարվելու՝ վորոշելու համար թե վոր հողերում ամերիկյան վազի վոր տեսակն ավելի հարմար կլինի վորպես պատվաստակալ:

Այգեգործական կայանի պտղաբուծական բաժինը զբաղված է յեղել յերկրում տարածված պտուղների տեսակները վոլոշելով և տարբեր շրջանների համար նոր, լավագույն տեսակներ գտնելու գործով: Նաև կալիֆորնիալի ձեռվ մրգեր չորացնելու փորձեր են արված:

Նույն կայանի գինեգործական բաժինը կատարել ե տեղական գինիների քիմիական և մեխանիքական անալիզը և նկարագրել ե այդ գինիները:

Զանազան տեսակ խաղողներից առանձին գինիներ են պատրաստված թե թունդ և թե քաղցր՝ նրանց հատկությունները և արժեքը վորոշելու հ սմար: Գինիները արհեստականորեն հնացնելու փորձեր են կատարված:

Շերամ կայանի աշխատանքն ևս տարեց տարի մեծանում եւ Հաշվետու տարում կայանը քննության ե առել 60. 495 տուփ շերամի սերմ, վորից խաթարվել ե 3148 տուփ: Աշխարակում, Ոշականում, Հրադանում կազմակերպված են շերամից ցաղրական կերակրում: Կայանի տնօկարանում պատվաստված են 200 զանազան տեսակի թթենիներ, պարզելու թե նրանցից վերն ե ամենահարմարը մեր յերկրի պայմաններում:

Շիրամի լավագույնը վորոշելու համար կայանն արթնացրել ե 23400 դրամ: զանազան ցեղերի սերմ: Քննված ե Բաղդադի և Յեվրոպայի ցեղերից ստացված թելը՝ նրանց միջին քանակը, կշիռը, թելի յերկարությունը, հաստությունը և այլ հատկությունները պարզելու համար: Փորձեր են կատարվում: Բաղդադի և Զինաստանի տեսակների խառնուրդի վրա՝ ցեղը լավացնելու նպատակով:

Ոդերեվուրաբանական ցանցը պատերազմի ընթացքում բոլոր վիճ վոշնչացել եր: Տարեց-տարի ցանցը վերականգնված ե և լայն սցված: Հաշ-

վետու տարում նոր կայաններ են բացված տասն և մեկ կետերում ու Լենինականի, Դարալագլազի և Յերևանի կոյաններին նոր գործիքներ են մատակարարված։ 154 կետեր են կազմակերպված՝ կարկտահարությունն ուսումնասիրելու համար։

Սեղանի լճակայանը 1927/28 թվականի ընթացքում շարունակել և իր աշխատանքները Սևանա լճի մանրակրկիտ ուսումնասիրության ուղղութեամբ՝ թե՛ զուտ գիտական և թե՛ գիտական-արտադրակ տեսակետից։

Բացի այդ, ուսումնասիրված են մի շարք ուրիշ լճեր՝ Ղանլը-գոյլ, Ալա-գյոլ, Աղր լիճ, Արփա-գյոլ Պարզ լիճ, Գլոբ-գյոլ, Շաղդաշ և Գելին։

Այդ ուսումնասիրությունները պետք են պարզեցն նշանց արտադրական հնարավորությունները ձկնաբուծության տեսակետից։ Այդ լճերում ուսումնասիրվում են «Փիշան» ձուկը բազմացնելու հնարավորության հարցը, վորն ահագին տնտեսական նշանակություն կունենա մեզ համար, քանի վոր այդ ձուկը միայն Սևանի լճում կա և նա կարող է ունենալ եքսպորտային խոշոր նշանակությունը՝ արտահանվելով Յեվրոպա։ Լճակայանին կից աշխատող ձկնաբուծարանը հավաքել է 24.110.000 ձկների։

Ագրոսպառուրյուն. — Յեթե գիտական-հետազոտական հիմնարկությունները գյուղատնտեսության զարգացման և բարելավման վերաբերմամբ փորձառություն են հավաքում, ապա այդ փորձառությունն ու գիտությունը գյուղական մասսայի մեջ տարածելու համար՝ գյուղում աշխատող ուժեղ ազգոնոմիական կազմ և հարկավոր:

**Մինչև խորհրդայնացումն այդ կազմը նույնպես բացակայում եր մեր յերկրում:** Խորհրդայնացումից հետո միայն տարեց-տարի այդ ցանցը լայնանում և ամրապնդում եւ:

Ազգուկազմի նվաճումներից պետք եւ համամարել գյուղացիության կողմից մեքենաների, կատարելագործված գործիքների, խոտասերմերի, տունկերի և այլն առաջադրած խոշոր պահանջը: Ներկայումս համարյա բոլոր շրջաններում գոյություն ունեն ազգուկայաններ: Ազգոնոմիաների ճնշող մեծամասնությունը բարձրագույն կրթություն ստացածներ են: Գավագրուկազմը.

1926/27 թ. 1927/28 թ.

Գավագրոնում	8	9
Շրջագրոնում	35	36
Հրահանգիչներ	12	18

Բացի այդ, Հողժողկոմատի գյուղվարչության մեջ աշխատում են վորակալ մասնագետ-

Ներ-տեսուչներ և աշխատանքները տեղերում դեկավարողներ:

Ադրբայլագանդան տեղերում տարվում ե զասախոսությունների, զրույցների, ցուցահանդեսների և եքսկուրսիաների միջոցով։ Այդ գործում մեծ դեր են խաղացել ցուցադաշտերը և ցուցահողատասերը։ Ցուցադրումը հանդիսանում է գլխավոր միջոցը՝ ագրոպալագանդայի։

Ցուցադաշտերը և ցուցահողամասերի ցանցը տարեց-տարի աճել ե, ինչպես յերեսում ե ներքև բերած տախտակից։

Տարի	Յուղագույն	Ցուցադաշտ	Հացահատիկ	Վ. Ռ. Բ. Ն. Ց. Ի. Ց.	Այլք		
1925/26	28	351	160	66	35	78	12
1926/27	30	502	110	196	64	117	15
1927/28	34	615	115	220	75	167	17

Նախորդ տարվա համեմատությամբ, ագրոկայանները հաշվետու տարում լրացված են ինչենտարով։ Միայն հողբաժինների գծով աշխատում են մոտ 15 սերմագտիչ։

Բարելավված ե շրջագրոնոմների դրությունը. նրանք բոլորն ել ապահովված են փխադրական միջոցներով։ Կահավորմամբ համե-

մատաբար հարուստ են Յերեանի գավառի աղբուկանները, դրանք բոլոր ել գտնվում են հատկապես իրենց տրամադրված շենքերում, վորոնց կից գտնվում են նաև փորձակալանները և ցուլանոցները։ Դարալազգյաղի գավառում և Նորբայազեղում այս տեսակետից դրությունը մխիթարական չեւ Այնտեղ ազգոնոմները չունեն թե աղբելու և թե աշխատելու տարրական հարմարություններ, ինչպես, որինակ՝ Մարտունու շրջանում և Քեշիշքենդում։ Հաշվետու տարում բոլոր մասնագետների հետ թե գավառներում և թե կենտրոնում հավաքական պայմանագրեր են կնքվուծ։

Այսուամենայնիվ պետք եւ շեշտել վոր գեռ թե աշխատավաճը և թե ընդհանուր պայմանները չեն ապահովում աղբոնոմիական դժվար աշխատանքը և ազրոկազմը գեռ հոսուն վիճակի մեջ եւ աղբոնոմները հաճախ թողնում են իրենց պաշտոնները։

Հայաստանի ընդհանուր լեռացին պայմանները, ահազին արոտային ֆոնդը՝ 507,474 հեկտար տարածությամբ, բարենպաստ պայմաններ են ստեղծում անասնապահության համար։ Այսպարհիցում մեծ աշխատանքներ կա կատարելու, սակայն ուժեղ Փինանսական բազայի

բացակալությունը խոչընդոտ և հանդիսանում է չի թույլ տալիս տեղերում անասնաբուժներունենալ, վորոնք անմիջապես կարողանային զեղավարել այդ աշխատանքը։ Հողժողկոմատում կա միայն մեկ տեսուչ-անասնաբուժ վորն իհարկե, ի վիճակի չե լրիվ չափերով լնողզրկել այդ աշխատանքը։

Անասնապահության ռացիոնալ գարգացման համար խանգարիչ և հանդիսանում նաև հացամթերքների սղթյունը, վորը թույլ չի տալիս կրծատել այդ կուլտուրան հոգուտ կերաբույսերի։

Հաշվետու տարում անասնաբուժական հետեւալ աշխատանքներ են կատարված։

1. Ցեղային անասնաբուժուրյուն Բացի կարակալայի և Դիլիջանի անասնաբուժարաններից, հիմնվել ե նաև Յանրիսի անասնաբուժարանը՝ բալբաս տեսակի վոչխարաբուժարանով։ Անասնաբուժարաններում տեղական կովերի կիթը հասցրված ե 13-14 ցենտների, յերբ նույն տեսակի կովերը գյուղական տնտեսության մեջ՝ տալիս են մինե 6-7 ցենտներ։

2. Ցուցադրական աշխատանքներ.— ա) ցուցադրական կերակրում կազմակերպված եր բոլոր գավառներում։ Ցուցադրված ե ռացիոնալ կերակրում՝ համաձայն կովի քաշի՝ կերի մեջ մտ-

ցնելով բազուկ, խտացրած կերեր (քուսպ): Վորոշված ե կաթի ինքնարժեքը՝ սովորական կերակրման և ռացիոնալ կերակրման պայմաններում: Ցուցադրական կերակրումը կիրառվել ե 17 կետում:

բ) ցուցահանդեսներ յեվ մեջանակաբաշխություններ

Ցուցահանդեսներ յեղել են բոլոր շրջաններում. դրանք կապված են ցեղել բերքի տոնի հետ: Կաթնատու կովերի մրցանակաբաշխությունն այս տարի ավելի լայն եր դրված, քան անցյալում և նկատի յեր առնված կաթի յուղի քաշակը. կովերը գնահատվում ելին կաթի միջ պարանակվող յուղի տոկոսի համեմատ: Հաշվետու տարում աշքի ընկնող կաթնատու կովերն առաջին անգամն ե, վոր գրանցվում են գավառային ցեղական գրքում: Մրցանակ են ստացել 45 կով և 10 վոչխար:

գ) Հաշվետւ տարում Ստեփանավանի յերկամլա դպրոցում շարունակվում ելին աշխախատանքները. այստեղից դուրս են գալու պատրաստված կաթնատեսվարպետներ: Ցուցի ալդ, յեղել լեն կարճատեկ կուրսեր՝ անասնապահության-մեկամսյա և յերկու տեղ ել մեկամլա մեղաքուծական կուրսեր, Այդ կուրսերը լսել են 90 հոգի:

դ) Բեղմնակայաններ գեռ քիչ կան մեր գավառներում, չնայած վոր պահանջը շատ մեծ է: Ընդամենին աշխատել ե 5 կայան՝ 7 ցուլով:

Լենինականի գավառն այդ բացը լրացնելու համար հիմնել ե ցուլաբուծարան, վորտեղ խնամվում են ընտրովի հորթեր՝ ցուլեր ստանալու համար:

Զոռտեխնիքական աշխառանքները վորոշ հաջողություններ են ունեցել. այսպես՝ 1927/28 թվականին, 2811 տնտեսություն խոտացանություն ե կերառել: 215 տնտեսություն խոտահարը և արոտը պարարտացրել ե գոմաղբով: 35 տնտեսություն բարեկարգել ե գոյերը, 3 տընտեսություն անցել ե ուացիոնալ կերակրման:

### ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԳՈՒԹՅՈՒՆ

Անասնապահության զարգացումը սերտ կապված ե անասնաբուժական գործի հետ:

Միայն լրիվ և ուժեղ անասնաբուժական ցանցը կարող է ապահովել անասնապահությունը՝ պայքարելով ժանտախտի և ուրիշ թե՛ եպիդեմիկ և թե՛ անհատական հիվանդությունների դեմ: Թեև յերկու տարի առաջ արդեն հիմնված են 18 անասնաբուժական կետեր, այնուամենայնիվ միջին թվով գավառներում աշխատել են 9-10 անասնաբուժ: Դրա պատճառն այն ե, վոր

Միության մասշտաբով ալդ մասնագետների պահանջը շատ մեծ է ու մեր պայմաններն ել չափազանց դժվարին են:

Հիշատակության արժանի յե, վոր թեև ծրագրված եր և նատեսված, ինչպես ասացինք, միայն 18 կետ, բայց տեղերն այս հարցում ընդառաջ գնալով, բացել են 28 կետ:

Վոր գլուղացիությունը նույնապես գնահատում է արդեն անասնաբուժության նշանակությունը, դրան ապացուց կարոք են ծառալել հետեւալ թվերը:

1925/26 թ. անցել են անասնբ. ամբ. 10.000 զԼ.

1926/27 թ. « « « 16.000 »

1927/28 թ. « « « 40.000 »

Մեր անասնապահությունը դրսից լեկած համաճարակներից ապահովելու համար նախատեսված է կազմակերպել սահմանային կարանտինային գոտի: Այդ գոտին հաշվետու ապարում ևս լրիվ կազմակերպել անհարիս յեղավ, վորովնեաւ տեղերում հարմար շենքեր չկան և ապա չնայած հրավիրված ելին 8 անասնաբուժ, բայց մինչև տարվա վերջը հինգը հեռացան, չնայած աշխատավարձի բարձրացման:

Կարանտինային գոտին վերջնականապես ազմակերպելու համար հատուկ հարմար շենքեր

կառուցելու հարց գըվեց: Յ կետերում շենքերի կառուցումն արդեն ավարտվում եւ:

Բնակչության առողջապահությունն ապահովելու համար սպանդանոցները նույնպես գրտնվել են անասնաբուժական հսկողության տակ:

Բժշկական քննությունն եւ կատարված 25.000 գլուխ խոշոր յեղջերավորի, 80.000 գլուխ մանր և 2.000 գլուխ խոզի վերաբերմամբ: Նույն հըսկողությունը յեղել եւ անասունների շուկաներում: Այս տեղերում քննված եւ 30.000 գլուխ խոշոր, 60,000 գլուխ մանր և 2.000 գլուխ ուրիշ անասուններ:

Անասնաբուժական գիտությունը տարածելու համար բացի դասախոսություններից և զրույցներից, հրատարակված են չորս մատչելի դրաֆույք – ժանտախտի և մյուս համաճարակային հիվանդությունների մասին:

Կարելի յեւ ասել, վոր անասնաբուժական աշխատանքներում զիմավոր տեղը բռնում եւ քոչվոր անասունների վերահսկողությունը: Սա յեւ ժանտախտի տարածման գլխավոր աղբյուրը:

Հաշվետու տարում գործում եյին 28 անասնաբուժական հսկիչ կետերը, վորոնցով անց եւ կացել 127.000 գլուխ խոշոր յեղջուրավոր, 866.000 գլուխ վոչխար ու այծ և 16.650 գլուխ ուրիշ անասուններ: Ընդամենը հաշվետու տա-

ըում աշխատում եյին 48 հոգի անասնաբուժներ  
և բուժակներ:

Պայքար ժանտախտի դեմ

Հիվանդություններից ամենավտանդավու-  
րը, ահազին վնասներ հասցնողը, ընդհանրապես  
Անդրկովկասում և մասնավորապես Հայաստա-  
նում հանդիսանում ե ժանտախտը։ Տարեց-տարի  
դրա դեմ ավելի ու ավելի ուժեղ պայքար ե մըդ-  
վում, բայց և այնպես դա մեծ ավերածու-  
թյուն ե գործում։

Հաշվետու տարում Միութենական մաս-  
շտաբով վորոշված եր արմատական պայքար  
մղել ժանտախտի դեմ և հակաժանտախտային  
սիճուկով բոլոր՝ յերկու տարեկանից բարձր տա-  
վարին մասսայական սրսկում կատարել։

Արդեն նախորդ տարվանից Յերևանում սկս-  
վել եր անասնաբուժական-բակտերիոլոգիական  
ինստիտուտի և նրան կից հակաժանտախտային  
սիճուկի կայանի կառուցումը։ Այդ անհրաժեշտ  
եր, վորովինետև պետք եր սիճուկով ապահովել  
յերկիրն։ Միության մյուս հանրապետություն-  
ների կայանները չելին կարող բավարարել այդ  
մեծ պահանջը։

Մասսայական սրսկումներն սկսվեցին մար-  
տի վերջերին և շարունակվում են նաև այս տա-

ըիւ Սրսկումը ծրագրված ե վերջացնել յերկու տարում:

Առ 1-ը հոկտեմբերի 1928թ. Դիլիջանի գավառում, վորտեղից սկսվեց կամպանիան, համաձայն ստացված տվյալների, սրսկված ե 95.000 գլուխ, վորոնցից, սրսկումից հետո, սատկել ե 1120 գլուխ, այսինքն՝ 1,3%.

Հուլիսի 15-ից սրսկումները սկսվեցին նաև Փամբակ-Լոռու գավառում, ու առ մեկն հոկտեմբերի սրսկված ե 84.000 գլուխ։ Այդպիսով՝ առաջին հերթին ապահովված են այն գավառները, վորոնց ավելի յեր սպառնում ժանտախտը և ուր կազ արդեն զտարյուն ցեղական անսպառն։

Բացի ծրագրային այդ աշխատանքից, հակաժամանակ խտային պայքար ե տարվել տարվա ընթացքում նաև այն տեղերում, ուր հայտնարերվել ե ժանտախտը։

Ժանդախտով վարակված կնտեր յեղել են.	
Փամբակ-Լոռու գավ.	15 կետ սրըսկ. և 25.449 գլ.
Նոր-Բբլազեղի գավ.	5 » » 4.670 »
Դիլիջանի գավ.	3 » » 4.421 »
Զանգեզուրի գավ.	28 » » 18.637 »
Դարձագլազի գավ.	2 » » 514 »
Եղմիածնի գավ.	1 » » 469 »
Ցեղականի գավ.	4 » » 507 »

Հնդամենը 54.667 գլուխ տավար, վորոնցից սատկել և 1730 գլուխ, կամ 3,10/<sub>0</sub>-ը։ Սատկածների այդ համեմատաբաժը բարձր տոկությացատրված է նրանով, վոր հաշվետու տարում ժանտախտի հետ զարգացած եր և «պիրոպլազմոզ», տավարի մալարիան, վորով բռնված եր և լեռնային մասը։

Բացի ժանտախտից և վերը հիշված «պիրուպլազմողից», հայտնաբերված են և ուրիշ վարակիչ հիվանդություններ, վորոնցից սիրիոսիստով հիվանդ ե յեղել 442 գլուխ, սատկել ե 327 գլուխ. սըսկում ե կատարված այդ հիվանդության դեմ 2272 զիսի վրա։ Մյուս հիվանդությունները մեծ ծավալ չեն ունեցել։

Ինչպես տեսնում ենք, անասնապահության զարգացման զվարակոր խոչընդունելից մեկու տավարի հիվանդություններն են, մանավանդ վարակիչները։ Ժամանակին գտնել հիվանդության բունը և միջոցներ ձեռք առնել, վոր նա չտարածվի—ահա գիշավոր խնդիրը։ Իսկ դրա համար հարկավոր են անասնաբուժներ, վորոնց թիվը չափաղանց քիչ ե Միոթենական մասշտաբով։ Դրա համար ել հաշվետու տարրում աշխատանքներ տարվեցին։ Անասնաբուժական ինստիտուտ բանալու համար Անդրկովկասի մասշտաբով։ Վորոշվեց այդ Ինստիտուտը բանալ

Յերեանում՝ Հողժողկոմատի կից։ Առաջին կուրս  
ու բացվեց այս աշնանը։ Հողժողկոմատը նրան  
տրամադրեց իր բակտերիոլոգիական ինստիտու-  
տը, լաբորատորիաները և կուրինեաները, իսկ հան-  
րակացարանի համար՝ իր նախկին շենքը։

Անասնապահության մեջ առանձին տեղ ու  
դեր ունի ծիաբանությունը։ Մինչև հիմա Հայաս-  
տանում ձին մեծ դեր չեր խաղում գյուղատն-  
տեսական աշխատանքների մեջ։ Բայց գյուղա-  
տնտեսության ինտենսիվիկացիան, բամբակի,  
ծխախոտի, ճակնդեղի, կարտոֆիլի ոացիոնալ  
կուլտուրան պահանջում ե շարքացան և միջար-  
քալին վար, վորը հնարավոր ե ձիան քարշով  
միայն Բացի այդ, մի շարք բարդ մեքենաներ,  
ինչպիսիք են շարքացանը, հնձող մեքենան, խո-  
հար մեքենան նույնպես հաշված են ձիու հա-  
մար և լոկ չեն բանում, յեթե դրանց լծում են  
յեզներ կամ դոմեշներ։ Այդ բոլորը մեր առաջ  
դնում ե ձիաբուծության զարգացման հարցը։

Հարկավոր ե ունենալ խոշոր և ուժեղ ձիյերի  
կազմը, վորը միայն կբավարարի գյուղատնտեսա-  
կան աշխատանքներին։ Միևնույն ժամանակ նա  
վորոշ չափով կծառայի նաև յերկրի պաշտպանու-  
թյան նպատակներին՝ հարկ յեղած դեպքում ծա-  
ռայելով Կարմիր Բանակի Կորիքներին։

Տեղական ձիյերը փոքր են և թույլ։ Բացի

այդ, իմպերիալիստական պատերազմի ընթացքում չափազանց պակասել ե դրանց թիվը։ 1927 թ. յեղած ձիյերը կազմում ելին նախապատերազմյանի 68,70%-ը միայն։ Ձիյերի բարելավման համար հիմնված ե ձիաբուծարան, վորտարվա սկզբում տեղափոխվեց Յերևանից Կարակալա, ուր նրան տրամադրվեց բավարար շենքեր և հողամասեր։ Խաթարման յենթարկվեց սկզբնական կազմը, վորը, հավաքված լինելով առաջին տարիները, վոչ վորակով, վոչ հասակով չեր համապատասխանում դրված նպատակին։ Ուստաստանի ձիաբուծարաններից զնվեցին նոր հովատակներ և հաշվետու տարում ձիաբուծարանի կազմը 1926/27 թվի հետ համեմատած՝ ուներ հետեւյալ պատկերը։

Տարի	Հովատակներ	Զամբիկներ	Վ. ս բ ո ն ց ի ց			
			Զամբիկներ	Բարձրացնեն	Կիսաբարձրուն	Տեղական
1926/27	2	22	3	2	17	6
1927/28	4	86	10	3	72	45

Պետական ձիաբուծարանի հովատակները հաշվետու տարում ամառը ուղարկված ելին գավառները՝ բեղմնավորման կամպանիայի։ Բեղմնավորման կետեր բացված եր 6 տեղ։ Բեղ-

մասվարդած ե 770 զամբիկ։ Բացի այդ, Նոր-Բայ-  
րազեղի գավառում կար հինգ հովատակ, վոր  
բերդած ելին արտասահմանից՝ կոռպերացիալի  
գծով և հանձնված ելին գավառին։ Դրանցով բեղ-  
մավորված ե ևս 75 զամբիկ։

Այս կամպանիային մասնակցել են և տեղա-  
կան ձիյերից ընտրված հովատակները, ըն-  
դամբնը 17 գլուխ։

Բացի այդ, յերկու կետում բացված ելին  
արհեստական բերմանավորման կայաններ, վորոնք  
տվեցին շատ մեծ արդյունք և միանդամայն  
գրավեցին բնակչության վստահությունը։ Այս-  
պիսով, այս տարվա կամպանիային մասնակցել  
են 36 հովատակ, բեղմանավորված և արհեստա-  
կան ձեռվ 270 զամբիկ և բնական ձեռվ 750,  
ընդամբնը՝ 1020 գլուխ։

### ԱՆՏԱՌԵՑԻՆ ՑՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Անտառների ընդհանուր տարածությունը  
356.000 հեկտար է, վորոնցից հատկապես ան-  
տառը բռնում է 291.000 հեկտար, իսկ 65.000-ը  
անտառալին բացուտներ են։ Անտառային տըն-  
տեսությունը 1927/28 թվականին բաժանված  
եր 11 անտառապետությունների, վորոնցում աշ-  
խատում ելին 28, մասնագետներ, 20 հոգի տեխ-  
նիքական պերսոնալ, 29 ավագ և 181 կրտսեր  
անտառապահներ։

Ինչպես մյուս ճյուղերը, նույնպես և անտառալին տնտեսությունը քարքայված վիճակում եր: Անտառշինարական աշխատանքներն անցրացում շատ չնշին են յեղել, իսկ շինարարված անտառներն ել այնպիսի վիճակի երին հասցրված, վոր հարկավոր եր նոր հետազոտություն և նոր շինարարություն, ապա թե վոչ, յեղած անտառներն ել կվոչնչանային:

Մինչև 1927/28 թիվը հետազոտված և անտառշինարարական աշխատանքներ ելին կատարված 214.933 հեկտար տարածության վրա: 1927/28 թ. անտառշինարարական աշխատանքները շարունակվում ելին. աշխատում ելին 13 հոգի հողաչափներ և անտառապետներ:

Շինարարված ե Դիլիջանի անտառապետության մեկ մասը, հետազոտված ե Զանգեզուրի անտառապետությունը 49.794 հեկտար տարարածությամբ և տեղական նշանակություն ունեցող անտառները՝ 4.900 հեկտար:

Այսպիսով, 1928/29 տարվա սկզբին արդեն ուսումնասիրված ե անտառների  $76^0/0$ -ը:

Հաշվետու տարվա անտառշինարարական աշխատանքների մեջ պետք ե հիշել նաև անտառների և գյուղացիական հողարաժինների սահմանների վորոշումը, վորը միշտ պատճառ ե դառնում թյուրիմացությունների և անտառի

քայլայման։ Ալղավիսի աշխատանքներ կատարվել են Շամշադինի, Կոթիզեղի, Դիլիջանի, Ղարաքիլսալի անտառապետություններում։ Տեղական վարչական մարմինների, Հողժողկոմատի և գյուղացիության ներկայացուցիչներից կազմված հատուկ հանձնառողություն եր անտառի և գյուղերի միջև սահմանները վորոշելու համար։ Հանձնաժողովի արձանագրության հիման վրա հողաչափները դնում են նշանները և կազմում հատակագծեր։

Անտ սուշինարարական աշխատանքներն ապահովում են անտառների ապագա ռացիոնալ ռգտագործումը, նրանց պահպանումը։ Բայց, ինչպես ասացինք, ՀՍԽՀ-ի անտառներն այն դրության մեջ են, վոր հարկավոր ե մտածել նրանց վերականգնման մասին, այսինքն՝ անտառաբուծական աշխատանքների մասին։

Դրա համար անհրաժեշտ եր ունենալ անտառային տնկար սններ, վորոնց կազմակեր զմանը և ձեռնարկվել եր դեռ 1926/27 թ.։ Այդ ժամանակ հիմնվեցին Լոռվա, Ղարաքիլսալի, Ծաղկաձորի, Յերևանի և Արագածի տնկարանները։ 1927/28 թ. հիմնվեցին Իջևանի և Զանգեզուրի տնկարանները։ Յեղս ծ տնկարաններից 200.000 հատ տունկեր տեղափոխված են անտառների բացուտները և 80.000 հատ տունկեր բաշխված

և աղղաբնակչությանը և հիմնարկություններին։  
Անտառի բնակման աճմանն աջակցելու համար  
կատարված են համապատասխան աշխատանք-  
ներ (հերկ և ցանքս տեղում) 2 900 հեկտարի  
վրա և անտառական բնակչությունը համար յեր-  
կաթալարով ցանկապատված ե 10 կիլոմետր յեր-  
կարությամբ անտառ՝ Դարագիլիսալի և Լոռվա-  
անտառապետություններում։

1926 թվին զատված են տեղական նշանա-  
կություն ունեցող 12,546 հեկտար անտառները։  
1927/28 թ. դրանք ուսումնասիրված, նկարա-  
գրված են և դրանց վերաբերմամբ ոգտագործ-  
ման ծրագիր ե կազմված։

Հաշվետու տարում վերջացրած ե նաև Դա-  
րագիլիսայի ու Դիլիջանի անտառապետություն-  
ների շենքերի կառուցումը։ Առաջիկա հնգամ-  
յակում պետք ե կառուցվեն մյուս անտառապե-  
տությունների համար համապատասխան շենքեր  
և կորդոններ՝ անտառապահների համար։

Անտառային որենսդրություն. — 1927/28 թ.  
վերանայված ե գոյություն ունեցող որենս-  
դրությունը, վորը չեր նախատեսում տեղական  
նշանակություն ունեցող անտառները և վորի  
մի շարք հողվածներն արդեն չեյին համապա-  
տասխանում նոր պայմաններին։

Մշակված են նաև նոր հրահանգներ՝ ան-  
տառանյութ հայթայթելու վերաբերյալ։

Նույնպես հաշվետու տար ւմ վերաքննված ե անտառանյութի սակագինը՝ Ժողոտնտխորհի առաջարկությամբ։ Կատու ըված հետազոտությունն ապացուցեց, վոր հաճարենու սակագինը, որինակ, չափաղանցված ե։

Մշակվեց նոր սակագին։ Վորը ներկտյաց ված ե ԺկԽ-ին ի հաստատություն։

Հողժողկոմատի անտառալին վարչությունը հաշվետու տարում տարել ե նաև անտառանյութի հայթայթման գործը Դիլիջանի և Իջևանի անտառապետություններում։ Անտառապետությունների այդ աշխատանքն ունի մեծ նշանակություն՝ անտառալին տնտեսության համար (ուացինալ կտրատում, սինոնիմ անտառի վերականգնում), ուստի այդ աշխատանքները առագայում պետք ե ավելի ընդարձակվեն և ընդգրկեն։ Մանավանդ մինչև հիմա դեռ ձեռք չտված, անժամանակ անտառալին մասսիվները (որինակ՝ Մարցի անտառապետությունը)։

1927/28 տարվա վերջում ԺկԽ առաջարկեց հրատապ պատրաստել 7.000-10.000 խոր. մետր վառելափայտ։ Այդ աշխատանքը տարվում ե Ախթալալի, Կոթիգեղի, Մարցի և Ղարաքլիսայի անտառապետություններում։

Անտառների հետզհետե կարգավորումը բարձրացնում ե և անտառային տնտեսության յե-

կամուտը: Այսպես անտառներից յեկամուտ ե  
ստացված 1926/27 թ.- 269.676 ռուբ. իսկ  
1927/28 թ. 350.139 ռ.: Ծախսեր յեղել են:  
1926/27—211.963 ռ., և 1927/28 թ.- 330.403  
ռուբ.: Պետք ե ի նկատի առնել, վոր հաշվետու  
տարվա ծախսերի մեջ մտնում են 127.092 ռ.  
հիմնական ներդրումները ու դա չպետք ե հա-  
մարել ծախս: Ուրեմն՝ անտառները հաշվետու  
տարում փաստորեն մաքուր յեկամուտ են տվել  
147.000 ռ., այսինքն՝ մեկ հեկտար անտառին  
50 կուկեկ:

### ՍԵՐՄԱՆՄԱՆ ԿԸՄՊԱՆԻԱՆԵՐ

Դարնանացանի կամպանիան

Մինչև այժմ նկարագրված աշխատանքները  
կազմում են չժեկ հիմնական աշխատանքները,  
վորոնց նպաւակն ե գյուղատնտեսության զար-  
գացման համար բարենպաս պայմաններ ստեղ-  
ծելը:

Բացի այդ, Հողժողկոմատի, վորպես գյու-  
ղատնտեսության ղեկավար մարմնի, վերա ծա-  
նրուցած եր նաև այս տարվա թե գարնան և  
թե աշնան սերմանման կամպանիաների դործը:

Սերմանման ծը սղրված կամպանիան նոր  
յերեւութ ե Խոր. Հանրապետությունների մեջ:  
Առաջին փորձն եր, վոր կատարվեց այս տարի:  
Դարնանացանի կամպանիայի ծրագիրը կազմելու

համար Հողժողկոմատն ուներ մի կողմից՝ Միության բարձրագույն որդանների վորոշումները, մյուս կողմից՝ Հայաստանի գյուղատնտեսության պայմանները՝ ցանքսերի ներկա զրությունը։ Վերջինս տալիս եր հետեւյալ պատկերը։

Հացահատիկների տարածությունը դեռ չի հասել նախապատերազմյան տարածության։ Տեխնիքական բուլսերի (բամբակի և ծխախոտի) ցանքսերը կրճատման տենդենց են ցույց տալիս 1926 թ. հետ համեմատած։ 1927 թվականի համար հետեւյալ պատկերն ունենք։

Հացահատիկները ընդարձակվել են  $6,8^0/₀$ , Տեխնիքական բուլսերը պակասել են  $15,5^0/₀$ , վորոնցից բամբակը պակասել ե  $17,3^0/₀$ ։ Այլ բույսերը (կարտոֆիլը) ավելացել են  $5,8^0/₀$ ։

Միաժամանակ նախապատերազմյան դրությանը չի հասել և լծկան անասունների քանակը։ Մինչդեռ արտադրող անասունների քանակն արդեն կազմում ենախապատերազմյանի  $97,3^0/₀$ -ը, այնինչ լծկան անասունները 1927 թ. կազմում ելին միայն  $85,6^0/₀$ ։

Հաշվետու տարվա գարնանացանի կամպանիան ձգտում եր ցանքսերի տարածությունն ընդլայնել։ Դրա համար գյուղացիական տնտեսություններին պետք եր ժամանակին մատակա-

ըարել սերմացու, մեքենաներ, գործիքներ ու  
լծկաններ, կամ այլ քաշող ուժ:

Նեկավարվելով յեղած դիրեկտիվսերով,  
պետք եր միջոցներ ձեռք առնել արտադրական  
ուժերի բարձրացման՝ կոռպերացման և կոլեկ-  
տիվացման ծավալման ուղղությամբ:

Այս բոլորից բղխում եր և կամպանիայի  
ծրագիրը:

1. Յեղած կոլտնտեսությունների ուժեղա-  
ցումը և նորերի կազմակերպմանն աջակցելը:

2. Ցանքսերի, մանավանդ տեխնիքական  
բույսերի, ընդլայնումը:

3. Կուլտուրաների բերքատվության բար-  
ձրացումը:

4. Կերարուկսերի տարածության լայնացու-  
մը, վորն անհրաժեշտ ե թե անամսաբուծության  
զարգացման և թե դաշտային կուլտուրաների  
բերքատվության բարձրացման համար: Գարնան  
սերմանման կամպանիայի կազմակերպման և դե-  
կավարման համար ժկվ վորոշմամբ արտակարգ  
լիազորություն ե արվում Հողժողկոմ ընկ. Ա.  
Ցեղնկյանին: Գավառային և շրջանային լիազոր-  
ներ նշանակվում են համապատասխան գործ-  
կոմիների նախագահները, լիազորներին կից կազմ-  
վում են հանձնաժողովներ՝ վարկային, գյուղ-  
կոռպերացիայի, ջրային վարչության և ագրո-

նոմիական կազմակերպության ներկայացուցիչ  
ներից:

Լիազորության առաջին աշխատանքը լեղավ՝  
զանազան կուլտուրների ցանքսերի տարածու-  
թյան վորոշումը և դրանց՝ ըստ գավառների բաշ-  
խումը:

Նկատի առնելով, վոր գարունն անսպասե-  
լի ուշ սկսվեց, դրա համար ամեն ջանք թափ-  
վեց, վոր ցանքսերի 1927 թվի տարածությու-  
նունն պահպանվի, համեմատաբար, ավելի ըն-  
դարձակելով տեխնիքական բույսերի, կարտո-  
ֆիլի և ցանովի խոտերի տարածությունը:

Գլխավոր կուլտուրաների համար վորոշվեց  
հետեւյալ տորածությունները, վորոնք բերված  
են ներքեի աղյուսակում: Նույն աղյուսակն ամ-  
փոփում եւ և փաստորեն կատարված ցանքսերը:  
Ինչպես տեսնում եք, ցանքսերի տարածությու-  
նը ծրագրված եր 237,155 հեկտար, 1927 թվի  
230,760 հեկտարի դիմաց: Բայց փաստորեն  
ցանված ե 248,773 հեկտար, ըստ Կենտվիճվա-  
րի տվյալների:

Այս տարածությունները վորոշելիո նկա-  
տի յեն առնված նաև ջրաշինարարական աշխա-  
տանքները: Առաջարկված եր Ջրանտեսության  
Վարչությանը շուտափութ վերջացնել Եջմիածնի  
ջրանցքը և Խորվիրապի ջրհանը: Գյուղդրանկին

Կուլտուրանիրի անունը	Տարածությունը հեկտարներով		
	1927 թ. ցանկություն	Երազրգած եր 1928 թ. ցանկություն	Փաստաթիվ ցանկություն 1928 թ.
Ճորին . . . . .	120.410	122.950	122.692
Գարի . . . . .	69.315	70.045	70.687
Կարտոֆիլ . . . . .	8.640	10.055	9.873
Խոտաբաւյսեր . . . . .	3.530	5.125	4.384
Բամբակ . . . . .	12.210	14.445	14.722
Ծիալոստ . . . . .	480	530	541
Բաստան, բանջարտնոց			
և այլ բույսեր . . . . .	16.175	14.005	26.174
Ցերկորդական հացա- բույսեր . . . . .			14.714
<b>Ընդամենը .</b>	<b>230.760</b>	<b>237.155</b>	<b>248.773</b>

առաջարկված եր յերկու ջրհան մեքենաներ գնե-  
լու համար վարկ տալ՝ վարկային ընկերություն-  
ներին։ Շնորհիվ ձեռք առնված այդ միջների,  
1928 թ. գարնան վոռոզվող վարելանողն ավե-  
լացավ 1.509 հեկտար, վորից 965 հեկտար տվեց  
Այդը լինը։

Միենույն ժամանակ նսիատեսվեցին նաև  
հեղեղի դեմ պայքարելու աշխատանքները։  
Շնորհիվ ձյունառատ ձմրան, պետք եր մեծ

միասներ սպասել հեղեղներից։ Դրանց առաջն առնելու համար Զրային Տետեսության Վարչությանը բացվեց 100,000 ռ. վարկ։

Չնայած ձեռք առնված միջոցներին, այսուամենախիվ հեղեղները վորոշ միաս հասցրին գյուղացիության։ Այսպես՝

Յերևանի գավառում	1,755 ռ.	սահմաններում
Եջմիածնի	20,580	»
Ն. Բայազեղի	1,500	»
Փամբակ-Լոռու	17,330	»
Դարալազդի	19,515	»

---

Ընդամենը . . . 198,045 ռուբլու։

Ցանքսերի հնարավոր տարածությունները վորոշելուց հետո պետք եր միջոցներ ձեռք առնվել, վոր այդ ցանքսերը փաստորեն արվեն, մանավանդ յերբ ձգտում կար, վոր ցանքսերը լայնացվեն միջակ և առանձնապես չբավոր տընտեսություններում և կոլտնտեսություններում։

Պետք եր պարզել սերմացվի և մեքենաների պահանջը, կատարել նրանց նպատակահարմար բաշխումը։

Հողժողկոմատի տվյալներով չքավորության սերմացվի պահանջը հասնում եր՝ ցորեն՝ 200,000 ֆ., իսկ գարի՝ 20,000 ֆ.։

Վորոշված եր այդքանը հայթավելքել, մասմբ սերմացու ներմուծելով, մասամբ ել պա-

ըենավորման ցորեն տրամադրելով, վորը չքավո-  
րական տնտեսությունները կկարողանային փո-  
խանակել տեղական սերմացվի հետ:

Բացի այդ, պետք եր ներմուծել և խոտարույ-  
սերի սերմեր:

Գետք ե ասել, վոր նախատեսված ծրագի-  
րը չհաջողվեց լրիվ կառարել:

Ցորեն, ալյուր ու գարի հաջողվեց ստանալ  
և բաշխել գավառներին ընդումենը 29 վագոն,  
վորից գարի՝ հինգ վագոն: Ինչ վերաբերում է  
խոտարույսերի սերմերին, հայթայթումն ունի  
հետեւյալ պատկերը.

	Պահանջը կիլո	Բավարարված ե կիլո
Առվույտ . . . . .	24.805	11.884
Վիկ . . . . .	16,806	13.257
Շամբալա . . . . .	14.000	1.939
Ցերեքնուկ . . . . .	811	797
Ճակնդեղ . . . . .	1.167	809
Կորնզան և այլն . . .	12.502	442

Վերը բերած քանակությունից դուրս՝ բամ-  
բակացան տնտեսություններին բաշխված եր  
2,249 տոնն (140,000 փ.) ցորեն և 1,212 տոնն  
բամբակի լավագույն սերմ:

Բացի սերմացվից, տեղերին բացված երկարճատև սերմվարկ—160,000 ռ. հացաբուլսերի համար և 10,130 ռ. կարճատև ու 17,870 ռ. յերկարատև վարկ՝ խոտաբուլսերի համար։

Մեքենաների պահանջը և բավարարումը յերեսում ե ներքե բերած տախտակից. այստեղ ել հնարավոր չեղավ պահանջը լրիվ բավարարել։

	Պահանջը	Բավարարումը
Գութան . . . . .	1.503	970
Փոցիս . . . . .	115	146
Կուլտիվատոր . . . .	281	219
Շարքացան . . . . .	89	103
Քամհար մեքենա . .	274	248
Այլ մեքենաներ . . .	47	32

Պետք ե շեշտել այն ևս, վոր սերմանման կամպանիայի համար մեծ խոչընդուռ հանդիսացավ Քոլագերանի մոռ յերկաթուղու գծի հեղեղից փչանալը։

Նկատի ունենալով լծկանների սակավությունը, —թեև ալդ նպատակով ել նախառեսված ելին վարկեր, վորի մասին կխոսենք հետո, —սիջոցներ ելին ծրագրված, վոր յեղած տրակտորներն ոգ-

տագործվեն ժաքսիմալ չափերով։ Հայութաղկոռալին  
առաջարկված եր անմիջապես վերջացնել վերա-  
նորոգող արհեստանոցների կահավորումը (բաց  
եր թողնված վարկ 28,250 ռ.) և անցել տրակ-  
տորների վերանորոգման։ Այդ աշխատանքին  
մասնակցելու եր կանչված նաև Անդրավտո-  
պլոմառզի Յերեանի արհեստանոցը։ Տեղերը  
հատուկ յասնագիտական հանձնաժողով եր ու-  
ղարկված՝ քննելու տրակտորների դրությունը,  
վերացնելու կազմակերպչական և այլ թերու-  
թյունները։ Պահեստի մասերի և վառելանյութի  
հալթայթումն ապահովված եր։ Ընդամենը կար  
206 տրակտոր, բայց նրանցից մոտ 30<sup>0</sup>/₀-ը հնա-  
ցած և աշխատանքի համար համարյա անպետք  
ելին։ Աշխատում ելին 145 տրակտոր։

Լծկանների համար բացված եր 100,000 ռ.  
յերկարատև վարկ, վորը բաշխված եր,

Յերեանի գավառին	30,000	ռ.	
Եջմիածնի	»	23,500	»
Լենինականի	»	8,000	»
Փամբակ-Լոռու	»	9,000	»
Դիլիջանի	»	8,500	»
Ն.-Բայազեղի	»	7,500	»
Դարալազյաղի	»	5,000	»
Զանգեզուրի	»	6,500	»
Մեղրիի	»	2,000	»

Նկատի ունենալով կերի սակագությունը, մանավանդ ձմեռվա յերկարության պատճառով, չքավոր տնտեսությունների համար վարկ եր բացված:

Լենինականի գավառին 3,000 ռ.

Ն. Բայազեղի » 5,500 »

Բացի այդ, վարի ժամանակ հայթայթված եր և բաշխված 180 վագոն խոտ և  $33\frac{1}{2}$  վագոն քուսպ, բացի 2± վագոն բամբակի սերմի կեղևից, վերը հայթայթել ու բաշխեր եր Հայրամբակկոմը:

Զնայած ձեռք առած միջոցներին, գավառներում, ըստ տեղեկությունների, կերի պակասից կոտորվել ե ընդսմենը մոտ 1,500 գլուխ խոշոր անասուն և 33,410 գլուխ մանր յեղջուրավոր անասուն:

Ինչպես վերը շեշտեցինք, սերմանման կամպանիան անց եր կացվում գլխավորապես չքավորության ոգնելու թեքումով և կոլեկտիվիզացիան ուժեղացվելու լոկունգով:

Կոլտնտեսություններին բացված եր առանձին վարկ, վորն ըստ գավառների կազմում եր.

Յերեանի գավառ 25,400 ռ.

Լնինականի » 25,200 »

Դիլիջանի » 11,500 »

Խոտորջուրի կամմունալին 5,000 »

Ընդամենը . . . 66,850 ռ.

Չքավորությանը վարկեր բացված ելին համապատասխան վարկային ընկերությունների միջոցով. բաշխված ե ընդամենը 74,800 ռ. Վարկազին ընկերությունների հիմնական դրամագլուխն ուժեղացնելու համար բաց եր թողնված 63,200 ռ.:

Բացի ցանքսերի տարածությունը լայնացնելուց, սերմանման կամպանիան նպատակ եր դրել նաև բերքատվությ մնը բարձրացնել:

Հրահանգված եր տեղերին կարգի բերել յեղած սերմազտիչները և դրանք մաքսիմալ չափերով ոգտագործել: Ծրագիր եր կազմված ցանքսերը հանքային պարարտանյութերով պարտացնելու վերաբերմամբ: Պարարտանյութերի համար վարկ եր բացված 20,000 ռ., վորից՝ 10,000 ռ. կոլլեկտիվ և 10,000 ռ. խորհրդակին անտեսություններին:

Գյուղացիական տնտեսություններում պարտացված ե 660 հեկտար բամբակի ցանք:

Դարնան սերմանման կամպանիան, վորպես առաջին փորձ, ուներ իր թերությունները, վորոնք պետք ե վերագրել զիսավորապես այդ աշխատանքին տեղերի անպատճառությունների մասունքին փչանալուն և հալթալթման գործի դժվարություններին:

Այնուամենայնիվ, ինչպես տեսանք, գարնա-

նացանի կամպանիան հաջող անցավ գերազանցելով ցանքսերի այն քանակին, վոր նախատեսված եր ծրագրով, բացի խոտաբուքսերից, վորոնց սերմացուն պակաս եր: Ինչ վերաբերում է կոլեկտիվ տնտեսություններին — դրանց գարգացումն ուժգին թափով առաջ գրաց:

### Ա. Յանապահին կամպանիան

Ա. Յանացանի կամպանիայի նախապատրաստական աշխատանքներն սկսվեցին հենց գարնանը:

Ծրագիրը կազմվել եր հետելալ հիմունքներով.

1. Աշնանացանը հայաստանում անհամեմատ ավելի քիչ եւ տարածված, քան գարնանացանը. այդ տարբերությունն աչքի յե ընկնում մանավանդ այն շրջաններում, վորտեղ տարածված են հացանատիկային կուլուրանները. որինակ՝

Լենինականի գավ. աշնանացան 1585 հեկտ. գարնանացան՝ 81184 հեկտ., Նոր. Բայազելի գավ. աշնանացան 1887 հեկտ., գարնանացան 38900 հեկտ.:

Այնինչ յեղած վորձերը թե Լենինականում և թե Նոր. Բայազելի գավառներում ապացուցում են, վոր այստեղ շատ հաջող կարող են գարգանալ աշնանացան ցորենների վորոշտեսակները:

2. Աշնանացան կուլտուրանները (բացառապես ցորենը և գարին) բամբակագործական շրջաններում հանդիսանում են վորապես բամբակի հետ մրցող կուլտուրաներ են, ուրեմն, այդ շրջաններում չպետք է աջակցել նրանց լայնացման, այլ միայն տեխնիկայի ուսուցիոնալ կիրառմամբ՝ բարձրացնել նրանց բերքատվությունը:

3. Աշնան կամպանիան պետք է նկատի ունենար վոչ միայն անմիջապես աշնանացան կուլտուրանները, այլ և առաջիկա գարնանացանի համար նախապատրաստական աշխատանքները, այսինքն՝ ուշ աշնան ցել անելը գարնանացանի համար, գոմազքը դաշտ տեղափոխելը, կերիպաշարի ֆոնդ կազմակերպելը՝ դարնան համար և այլն:

4. Ուժեղացնել կոլտնտեսությունները:

Դեկավարվելով այդ հիմունքներով՝ հետևյալ ծրագիրն եր մշակվել աշնանացան կամպանիայի համար:

1. Աշնանացանքսերի քանակն ընդունել 90,000 հեկտար. Ցացքսերի տարածության ընդլայնումը կատարել վոչ ի հաշիվ տեխնիքական բույսերի և այդ բույսերը մշակող շրջանների, այլ ի հաշիվ գարնանացան հացահատիկի և խամթողած հողերի:

2. Նկատի առնելով, վոր գարնանը սերմաց-

վի պակասության պատճուռով հնարավոր չեղավ նախատեսված տարածությամբ խոտաբույսեր մշակել, աշնանը առվույտ և կորնդան ցանել, վորի համար հայգյուղկոռալին հանձնարարել հալթալթել 16,000 կիլո կորնդանի և 13,000 կիլո առվույտի սերմ:

3. Աշնանացանը ընդարձակելու համար Լենգավառ և Նոր-Բալազեդ ներմուծել ցրտադիմացկուն ցորեն—«земка» և «кооператорка» 2,500 ցենտներ:

Բացի այդ, տեղերում պատրաստել աշնան սերմացու:

4. Վարը ժամանակին կազմակերպելու համար ծրագրվել եր նախ տրակտորները վերանորոգել, ընդարձակելով վերանորոգման արհեստանոցների ցանցը և նորից 10 տրակտոր ստանալ: Այնուհետև ծրագրվել եր կոլտնտեսություններին և չքավոր տնտեսություններին լծկաներ հալթայթել: Ծրագրվել եր նաև ուժեղացնել վարձակայանները և սերմազտիչ գումակները՝ ցանքերին գործնական ոգնություն ցույց տալու համար:

5. Գարնան կամպանիալի համար նախատեսվեց: 1. կազմել կերի ֆոնդ—300,000 փութխոտ, վորը հանձնվեց հայգյուղկոռալին և Գյուղտրեստին: 2. Ուժեղացնել գարնանացանի համար աշնանավարի աշխատանքները, հանձնարա-

բելով Հայոցուղկոռպի բանմբակսեկցիալին, վոր  
նա բամբակի շրջաններում այժմյանից կոնտրակ-  
տացիայի կամպանիա սկսի, ապահովելու 3,500  
հեկտարի վար բամբակի համար։ Համաձայն այդ  
ծրագրի կազմվեց նաև Փինանսավորման ծրա-  
գիր՝ 437,000 ռ. սահմաններում՝ հետեւյալ ստո-  
րաբաժանումներով։

1.	Տեսակավոր սերմացու գնելու . . . . .	37.000 ռ.
2.	Տեղերում սերմացու պատրաստելու . . . . .	90.000 »
3.	Խոտաբույսերի սերմացու . . . . .	20.000 »
4.	Վերանորոգման արհեստանոց . . . . .	38.000 »
5.	10 տրակտորի գնում . . . . .	40.000 »
6.	Լծկաններ ձեռք բերելու . . . . .	130.000 »
7.	Կերի պաշար պատրաստելու . . . . .	100.000 »
8.	Վարձակաւանների ուժեղացման . . . . .	18.000 »
	<u>Ընդամենը . . . . .</u>	<u>473.000 ռ.</u>

Պարզ ե, վոր աշնանացանի տարածության  
ընդլայնան զուղընթաց պետք եռ ձեռք առնել  
միջացներ նաև բերքատվության բարձրացման  
ուղղությամբ։ Այս ասպարիզում մեր զիսավոր  
նսկատակը պետք երդիներ այս կամպանիայի ըն-  
թացքում սերմագտիչներն ու շարքացանները  
լայն չափով ոգտագործելը։

Դառնալով աշնանացան կամպանիալի հե-  
տեւանքներին, պետք ե ընդգծել, վոր տեղերում  
կամպանիան թույլ ե տարվել վոր հաստրակա-

կան և կուսակցական մարմիններն ակտիվ մասնակցության կոչված չեն լեղել։ Այս հանգամանքը մանավանդ աճքի յե ընկնում բերքատվության բարձրացման աշխատանքների ասպարիզում, ուր շատ չնչին աշխատանք և կատարված։ Յեղած սերմագույններն, ինչպես և շարքացանները լրիվ չեն ոգոտագործված։

Յերկրորդ.—Թեև ընդհանուր առմամբ ցանքերի տարածությունն նախատեսվածից ավելի լեր, բայց աշնանացանն ընդարձակվել երամբակագործական շրջաններում, ուր դա ցանկալի չեր, մի հանգամանք, վոր բացասաբար, կանդրադաւնա բամբակի ցանքերի վրա։

Յերրորդ.—Չսալած, վոր առվույտի սերմկար, այնուամենայնիվ վոչ սիտեղ աշնանն առվույտ չի ցանված։

Արտաքին պատճառներից պետք ե հիշել, վար՝

1. Հնարավոր չեղավ ներմուծել տեսակավոր ցորենի սերմացու՝ լենինականի և նոր-Բայազեղի գավառների գամար։

Այս աշնանն առաջին անգամ ՀՍԽՀ հացահատիկների կոնտրակտացիա կերպովեց։

«Խեթապուղի» հետ պայմանն եր կնքված կոնտրակտացիայի լենթարկելու 1,000 հեկտար շարքացան և 2,000 հեկտար շաղացան ցանքեր։

Հնարավոր լեղավ պայմաններ կնքել 1,450 հեկտար շաղացանի և 450 հեկտար շարքացանի: Կոնտրակտացիոն պայմաններ կնքված՝ են գըլխավորապես կոլտնտեսությունների հետ:

Աշնանացան կամպանիայի հաջողություններից դիսավորը պետք է համարել կոլտնտեսություն շինարարության զարգացումը:

Կոլտնտեսություննի տվյալների համաձայն, ոգոստոսից մինչև նոյեմբեր կազմակերպված և ստցրված ե կենտրոնի ցանցը 21 կոլտնտեսությունները:

Բացի այդ, Նոր-Բայազեդի լիազորը հայտնում ե, վոր կազմակերպված են 17 կոլտնտեսություններ՝ 490 տնտեսություններից, իսկ Փամբակ-Լոռում՝ 12 կոլտնտես. 209 տնտեսությունից:

Կոլեկտիվ տնտեսություններին սերմացու և գործիք-մեքենաներ հայթալիթվել ե բավարար չափով:

Ըստ կենտվիճակարի տվյալների, աշնանացանը 1927 թ. բռնուվ է 95,548 հեկտար, նախատեսված եր, ինչպես ասացինք, այն հասցնել 90,000 հեկտարի: Վարկավորման ծրագիրը նույնպես կատարված է համարյա լրիվ:

Ինչպես վերն ասացինք, 473,000 ռ. նախահաշիվ եր. կազմված: Համաձայն կամպանիայի

ծրագրի վարկ ե տրված **447,000 ռ.**, վորից լծկան-ներ ձեռքբերելու՝ **100,000 ռ.**, սերմվարկի՝ **90,000 ռ.** ուղղի, խոտասերմերի՝ **16,900 ռ.**, գյուղատնտեսական ինվենտարի՝ **58,000 ռ.**, կերի պաշառ պատրաստելու՝ **40,000 ռ.**, տրակտորների վերանորոգման՝ **49,000 ռ.**, վերանորոգման արհեստանոցի՝ **38,000 ռ.**, վարձակայանների ուժեղացման՝ **18,000 ռ.**, մնացել ե առանց ոգտագործման տեսակավոր սերմի համար—**37,500 ռ.**:

\* \* \*

Վերջացնելով Հողժողկոմատի 1927/28 թվականի զործունեության համառոտ նկարագիրը, պետք ե ասենք հետևյալը.

Գյուղատնտեսության զարգացումը պահանջում է ուժերի և միջոցների լարվածություն։ Այն մեծ աշխատանքների համեմատությամբ, վորկանգնած են մեր առաջ, հնարավորությունները շաա սակավ են։

Նախ Հողժողկոմատի մասնագիտական կազմը բիչ ե. որինակ՝ այնպիսի մեծ նշանակություն ունեցող գյուղատնտեսական մի ճյուղ, ինչպիսին ե անասնապահությունը, սպասարկվում ե միայն մեկ մասնագետով, այնինչ, որինակ, ԲՄՖԽՀ, Վզագմալի գավառում, ուր կա միայն **100,000 կով** (մեզ մոտ **200,000-ից** ավելի ե) զոռտեխնիքական կազմը հասնում ե **80** հոգու։


Հողժաղկոմատը չունի բամբակագործության մասնագետ։ Գլուղվարչությունը, վրը պետք եղեկավարի հասարակական ազգոնոսիանն, կենուրոնում չունի համապատասխան մասնագետ՝ վորն անմիջապես տանեայդ աշխատանքը, ուստի և կապը տեղերի հետ թուց եւ պատահ կան։

Նույնը նկատվում եւ նաև տեղերում (գավառներում)։ Զեան վորակյալ մասնագետներ, գոնեա այն ճյուղի վերաբերմամբ, վորը տվյալ գավառում պետք եւ լինի գերի շխողը։ Ամբողջ աշխատանքն ընկնում եւ գավագրոնոմի և շրջագրոնոմի վրա։ Պարզ եւ, վոր ազգոնոմը չի կարող մասնագետ լինել բոլոր ճյուղերում, վորի պատճառով և գործը տուժում եւ։

Կազմերի սակավությունը չի լրացնում նաև մեր կոռպերացիան։ Հայդյուլգիոպի ազգուհազմը հաշվում եւ միավորներով, նույնիսկ կոլտնտկենուրունն իր աշխատանքի վերագանց մասը տանում եւ շրջագրոնոմների միջոցով։

Զափազանց թուլ եւ և փորձնական գործը։ Տարեց-տարի բաց թողնվող գումարները չեն համապատասխանում փորձնական գործի եյտկան պահանջներին։

Ներկայումս, յերբ մեր առաջ դրված եւ գյուղատեսական վերակազմության և բերքատվության բարձրացման հարցը, պետք եւ առավել ուշադրությունն իմիրել գյուղատնտեսության կարիքներին՝ ուժեղացնելով թե մասնագետների կազմը և թե բոլոր գույքով տրվող միջոցները։



16.	Հայաստանի Կոմմունիստական կուսակցության և ենթական Կոմիտեի Հարցուգ Պլենումի Բա- ռանձնվերը (սպառված)	15 »
17.	Ռ. Արմենիան.—Խոշոր յեղջյուրավոր անասուն- ների ժանտախտը (սպառվ.)	15 »
18.	Հ. Ազայան.—Գյուղատնտեսական բանվորութ. և միջազգ. կոմմունիստական շարժումը (սպառ.)	40 »
19.	Ն. Խան-Աղյան.—Ուղեցուց արդյունավետ խողա- րուծության	15 »
20.	Ֆերգինանգով. - Հայաբուծ. և նրա ոգուտն. (սպ.)	20 »
21.	Ս. Դանելբեզ. —Լավ և ուշ, քան յերբեք (ազրո- պիլես) (սպառված)	20 »
22.	Կ. Կ. Մելիք-Շահազարյան.—Կտավատը և կա- նեփը (սպառ.)	20 »
23.	Ս. Լուկածին. —Անդրկովկասի տնտեսական դրու- թյունը (սպառ.)	15 »
24.	Հրահանգ Հայաստանի Խ. Ս. Հանրապետության անօտաներից փայտեղեն բաց բողելու համար (պաշտոնական)	
25.	Պրաֆ. Ա.Վ. Քալանքար. —Կաթնատու կովի կերակր.	30 »
26.	Ս. Ս. Ցինոնինգ. —Ինչու պետք ե ցելը շուտ անել	15 »
27.	Ս. Բակունց. —Գալուստի վիկը (ազրո-պատմվածք)	15 »
28.	Ս. Բակունց. —Կարտոֆիլի մշակությունը	20 »
29.	Լ. Սուբբոսին. —Կովի դատը (ազրո-պիլես)	20 »
30.	Կ. Կ. Մելիք-Շահազարյան.—Տիզկանեփ (սպառ.)	5 »
31.	Խ. Ցեր-Ներսիսյան.—Պտղատու ծառերի մնասա- տուներն ու հիվանդությունները	25 »
32.	Խ. Ավգալբեկյան.—Գյուղի հողաշինարարութ.	20 »
33.	Արագի. —Տրակտորը (ազրո-պատմվածք)	15 »
34.	Ցալացի. —Խորհրդավոր տրտունջներ ազրո-զրուց	15 »
35.	Խնկո-Ապեր. —Գյուղատնտանասնաբույծը և իր ազրո-զրուցը	20 »
36.	Ս. Ցինուին. —Տասը պատգամ անասնապահին (բ. տպագր.)	20 »
37.	Մ. Խանզադյան.—Մեղքարծության գործնական ձեռնարկ (սպառված)	60 »
38.	Արամայիս Ցերպեկյան.—Մեր զբուղատնտեսու- թյան հերթական խնդիրներից (սպառված)	40 »

1  
4255

39. Ա. Արանիսյան.—Գութան, թե արոր (սպ)	
40. Վ. Բոյկով.—Այժմ աղքատի կովն ե (սպա)	
41. Իս. Ֆեր-Ներսիսյան.—Գոմաղը	
42. Ի. Կուզբեցով.—Լենինը և գյուղացիությունը	30 Տ
43. Ա. Մուսելյան.—Անտառը պետք ե հաշվով կտրել	5 Տ
44. Իս. Ֆեր-Ներսիսյան.—Խնչպես պատվաստել պըտ-	
դատու ծառերը	10 Տ
45. Ա. Բակունց.—Խոտորջուրի կոմունան	30 Տ
46. Հ. Ֆաբյան.—Յեռադաշտից դեպի սոցիալիզմ՝ կոռպերացիայի վրայով	1 ռ. 50 Տ
47. Վ. Ս. Միխայլով.—Տավարի վարակիչ հիվանդու- թյունները	5 Տ
48. Մ. Թումանյան.—Վիկ	25 Տ
49. Պ. Քալանքարյան.—Գոմաղը	5 Տ
50. Նովմբերի ճանապարհին (ժողով) (սպառ.)	20 Տ
51. Պրօֆ. Ա. Քալանքար.՝ Կաթնառատ կովի ընտ- րությունը և նախիրի ազնվացումը	20 Տ
52. Հրահանգ գյուղատնտ. կոոպերատիվ ընկերութ. տոմարագրելու կարգի մասին (հավ. «Գյուղ. Կյանք»ի)	
53. ԽՍՀՄ Հոգովագործության յեվ հողագինարա- րության բնգինանուր եիմունքերը	20 Տ
54. Հ. Փիրումյան.—Հողժողկոմատի 1927/28 թ. գոր- ծունելությունը	

## ՊԱՏՐԱՍՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԿԱԱՆՁՆՎԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ

1. Ա. Գերմիոյան.—Պաղատու այգին ու նրա խնամքը
2. Վ. Պ. Դոբրենին.—Զիյերի արհեստական բեղմնավորումը
3. Պ. Քալանքարյան.—Քերքի բարձրացման խնդիրներ
4. Ա. Իսահակյան.—Հանրամատչելի զրույցներ գինե-  
գործութ. մասին

ԳԽՄԾԼ՝ Ֆերնվան, Հողժողկոմատ՝ Հրատարակչության՝  
Հայգրքի կենտրոնական յեվ գավառական գրա-  
խանութներին, Գավիողբաժիններ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039183